

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

## ԶԲՈՍԱՇՐՁՈՒԹՅԱՆ

### ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ

### ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Այս հրապարակումը պատրաստվել է «Վորդ Վիժն» միջազգային բարեգործական կազմակերպության Լոռու մասնաճյուղի մեկնարկած զբոսաշրջության և երիտասարդների ձեռներեցության զարգացման ծրագրի շրջանակներում՝ շահագրգիռ կազմակերպությունների ուշադրությանը ներկայացնելու Լոռու մարզում զբոսաշրջության զարգացման հնարավորությունները: Հրապարակված տեղեկատվության համար պատասխանատվություն են կրում միայն հեղինակները. Ա.Ոսկանյան և տարածքային զարգացման ծրագրերի (Ստեփանավան և Ալավերդի) երեքական համայնքների երիտասարդներ:


**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ**

**ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ԾՐԱԳԻՐ**

Մույն հետազոտության նպատակն է բնութագրել և գնահատել Լոռու մարզի զբոսաշրջային ռեսուրսները, բացահայտել մարզի և՛ զբոսաշրջության զարգացման հեռանկարները, և՛ այդ ոլորտում ձեռներեցության զարգացման հնարավորությունները, խթանել մարզում հյուրընկալման ոլորտի գործարարության առաջընթացի մեջ տեղի երիտասարդների ընդգրկվածությունը և ներկայացնել նախապայմաններ բարենպաստ գործարար միջավայրի ձևավորման համար:

Հետազոտության կազմակերպման և իրականացման համար ձևավորվել են թիմեր՝ կազմված յուրաքանչյուր տարածքային զարգացման ծրագրերի (Ստեփանավան և Ալավերդի) երեքական համայնքների երիտասարդներից:

*Գծապատկեր 1. Զբոսաշրջության և երիտասարդների ձեռներեցության զարգացման ծրագրի հիմնական նպատակները*




Մեթոդական վերապատրաստում անցնելուց և համապատասխան ուղղորդումներ ստանալուց հետո, թիմի անդամներն իրականացրել են թիրախ համայնքներից հետազոտության տվյալների հավաքագրում՝ հետագա վերլուծությունների և առաջարկությունների մշակման համար:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Լոռու մարզում պետական գերատեսչությունների կողմից որպես գերակա ճյուղ համարվում է նաև գյուղական զբոսաշրջությունը, ծրագրի շրջանակներում նախապատվություն է տրվել մարզում հատկապես այդ ուղղության հետազոտությանը: Դրա հիման վրա կատարվել է տեղանքին բնորոշ գյուղական զբոսաշրջության կազմակերպման իրավիճակային վերլուծություն, նաև հետազոտվել են մարզում զբոսաշրջության այն տեսակները, որոնք հնարավոր են զուգորդել գյուղական զբոսաշրջության հետ:

Հետազոտության վերջին փուլում կազմակերպվել են հանդիպումներ երևանյան մի քանի տուրօպերատորի հետ, որոնց արդյունքում էլ հնարավորինս բացահայտվել են մարզում զբոսաշրջային գործարարության ակտիվացմանը խոչընդոտող մի շարք խնդիրներ, դրանք են.

- Մարզի զբոսաշրջային ենթակառուցվածքների ներկայացվածության պակաս
- Գյուղական համայնքներում օտարալեզու բնակչության շատ քիչ քանակություն
- Հուշանվերների խանութների բացակայություն (հիմնականում սեզոնային տաղավարներ են)
- Հիմնական զբոսաշրջային այցելավայրերի հարակից տարածքներում ոչ հետևողական աղբահանման կազմակերպում
- Հանրային սանհանգույցների բացակայություն կամ անմխիթար վիճակ (բարվոք սանհանգույցներ առկա են գազալցակայանների սպասասրահներում)
- Անբարեկարգ ճանապարհներ գյուղական համայնքներում
- Հանրային սնունդ սպասարկող հաստատությունների առաջարկած ուտեստների տեսականու սակավություն
- Ճաշացանկերում ազգային կերակրատեսակների ոչ պատշաճ ներկայացում
- Համացանցում հյուրանոցային տնտեսության օբյեկտների վերաբերյալ պատշաճ տեղեկատվության բացակայություն
- Հյուրատներում ծառայությունների մատուցման ոչ մասնագիտական մոտեցում
- Մարզի թանգարանների հանդեպ ոչ պատշաճ հոգածություն
- Հիմնական այցելավայրերը ուղղորդող ճանապարհային ցուցանակների բացակայություն կամ ոչ բարվոք վիճակ
- Գյուղական համայնքներում հիմնական փողոցներին կից դարպասների անխնամ վիճակ
- Զբոսաշրջային գործարարության ընդգծված սեզոնայնություն
- Առողջարանային ենթակառուցվածքներում ժամանակակից ռեկրեացիոն չափանիշներին անհամապատասխանություն
- Զբոսաշրջության գործարար միջավայրում չհամակարգված գործունեություն

Գծապատկեր 2. Լոռուի զբոսաշրջային գործարարության ակտիվացմանը խոչընդոտող հանգամանքներ



Առկա խոչընդոտների հաղթահարման փնտրտուքների արդյունքում կատարվել են որոշ առաջարկություններ՝ մարզում առավել մրցունակ զբոսաշրջային տուրփաթեթներ ձևավորելու և մարզի զարգացումը խթանելու նպատակով. (առաջարկությունները գետեղված են ստորև ներկայացված բաժիններում):

Լոռու մարզը զբոսաշրջության համար պատմամշակութային և բնական ռեսուրսներով հարուստ տարածաշրջան է, այն ներուժ ունի միջազգային հյուրընկալման շուկային առաջարկելու մրցունակ զբոսաշրջային արդյունք: Սակայն մարզի հյուրընկալման ենթակառուցվածքների զգալի մասը հնարավորություն չեն ընձեռնում միջազգային շուկային առաջարկել ավելի խստապահանջ հաճախորդի կարիքներին համապատասխանող բարձրակարգ տուրապրանք: Մարզում հյուրընկալման ոլորտի ցանկալի զարգացում արձանագրելու ակնկալիքով էլ իրականացվել է սույն նախաձեռնությունը:

21-րդ դարասկզբից մինչև հիմա Լոռու զբոսաշրջության ոլորտի զարգացման միտումները նկատելի են: Այնուամենայնիվ, ուսումնասիրման արդյունքները փաստում են, որ

հայաստանյան մարզային համատեքստում Լոռու մարզում ներգնա զբոսաշրջությունը բնութագրվում է միջազգային այցելուների համեմատաբար քիչ քանակությամբ (դասական տուրերի մեջ գերակշռում են այն մարզերը, որոնք աշխարհագրական դիրքով մայրաքաղաքին ավելի մոտ են գտնվում):

Կարևորվում է մարզի համայնքների երիտասարդների ներգրավվածությունը նման ծրագրերում, քանի որ դա կարող է նպաստել ոչ քաղաքային բնակավայրերում երիտասարդության զբաղվածության ապահովմանը, որոշ չափով աղքատության հաղթահարմանը և արտագաղթի խոչընդոտմանը: Այս նպատակների իրականացմանն են ուղղված սույն հետազոտության մեջ առաջադրված խնդիրների լուծումները:

## ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տարածքը - 3798 քառ.կմ

Մարզկենտրոնը - ք. Վանաձոր

Բնակչությունը - 234.7 հազ.մարդ, այդ թվում՝

Քաղաքային - 137 .2 հազ. մարդ (58,46%)

Գյուղական - 97,5 հազ. մարդ (41,54%)

Քաղաքային համայնքներ - 8

Գյուղական համայնքներ – 105

Լոռու մարզը տարածքի մեծությամբ ու բնակչության թվաքանակով երրորդն է հանրապետությունում (զբաղեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): Գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արևմուտքից Շիրակի, արևելքից Տավուշի, հարավից Կոտայքի եւ Արագածոտնի մարզերին: Մահմանամերձ բնակավայրերն են Արծնի, Ապավեն, Չորամուտ, Պաղաղբյուր, Ջիլիգա:

Մարզի տարածքով է անցնում Թբիլիսի-Երևան երկաթուղու մի հատվածը:

Որպես մարզի զարգացվածության ցուցանիշ հարկ է նշել, որ 2011 թվականի տարեսկզբից Լոռվա մարզի 113 համայնքի տեղական ինքնակառավարման մարմիններից 95-ն ունենին համակարգիչներ, 38-ը՝ ինտերնետ կապ:<sup>1</sup> Իսկ 2013 թվականի տարեվերջին բոլորն ունեն համակարգիչ և միայն Անտառաշենում չկա ինտերնետ կապ:

ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, որոնք իրենց համայնքներով ներկայացված են ստորև:

**Գուգարքի տարածաշրջան** - (1 քաղաքային՝ Վանաձոր և 21 գյուղական՝ Ագնվաձոր, Անտառամուտ, Անտառաշեն, Արջուտ, Բագում, Գուգարք, Դարպաս, Դեբեդ, Եղեգնուտ, Լերմոնտովո, Լեռնապատ, Հալլավար, Չորագետ, Չորագյուղ, Մարգահովիտ, Շահումյան, Վահագնաձոր, Վահագնի, Փամբակ, Քարաբերդ, Ֆիդլետովո համայնքներ)

<sup>1</sup> ՀՀ Լոռու մարզի ձեռքբերումները 2007-2011թթ., Երևան, Տնտեսական բարեփոխումների վերլուծական – տեղեկատվական կենտրոն, 2012թ., 78 էջ

**Թումանյանի տարածաշրջան** - (4 քաղաքային՝ Ալավերդի, Թումանյան, Ախթալա, Շամլուղ և 27 գյուղական Աթան, Ահնիձոր, Այգեհատ, Արդվի, Արեւածագ, Աքորի, Դսեղ, Թեղուտ, Լորուտ, Ծաթեր, Ծաղկաշատ, Կաճաճկուտ, Կարմիր Աղեզի, Հազվի, Հաղպատ, Ճոճկան, Մարց, Մեծ Այրում, Մղարթ, Նեղոց, Շամուտ, Շնող, Չկալով, Ջիլիգա, Քարկոփ, Քարինջ, Օձուն համայնքներ)

**Մպիտակի տարածաշրջան** - (1 քաղաքային՝ Մպիտակ և 20 գյուղական՝ Արեւաշող, Գեղասար, Գոգարան, Լեռնանցք, Լեռնավան, Լուսաղբյուր, Խնկոյան, Ծաղկաբեր, Կաթնաջուր, Հարթագյուղ, Դուրսալի, Մեծ Պարնի, Նոր Խաչակապ, Շենավան, Շիրակամուտ, Ջրաշեն, Սարալանջ, Սարահարթ, Սարամեջ, Քարաձոր համայնքներ)

**Ստեփանավանի տարածաշրջան** - (1 քաղաքային՝ Ստեփանավան և 18 գյուղական՝ Ագարակ, Ամրակից, Բովաձոր, Գարգառ, Գյուլագարակ, Լեջան, Լոռի Բերդ, Կաթնաղբյուր, Կողես, Կուրթան, Հոբարձի, Հովնանաձոր, Յաղդան, Պուշկինո, Սվերդլով, Վարդաբլուր, Ուրասար, Ուռուտ համայնքներ)

**Տաշիրի տարածաշրջան** - (1 քաղաքային՝ Տաշիր և 19 գյուղական՝ Ապավեն, Արծնի, Բլագոդարնոյե, Դաշտադեմ, Լեռնահովիտ, Կաթնառատ, Չյունաշող, Չորմուտ, Մեղովկա, Մեծավան, Մեղվահովիտ, Միխայլովկա, Նովոսելցովո, Նորաշեն, Պաղաղբյուր, Պետրովկա, Պրիվոլնոյե, Սարատովկա, Սարչապետ համայնքներ):

Մարզը մինչև 1988թ. երկրաշարժը ունեցել է զարգացած և բազմաճյուղ տնտեսություն:

Ջրոսաշրջությունը տարբեր միջոցներով կարող է ազդեցություն ունենալ վերոնշյալ համայնքների զարգացման և բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Ոլորտում ստեղծված աշխատատեղերը և դրանց արդյունքում ձևավորված եկամուտները կհանդիսանան տեղի բնակչության կողմից գյուղական համայնքները չլքելու շարժառիթ:

## ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

### ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Լոռու զբոսաշրջության ոլորտում առկա խնդիրների հաղթահարման և ոլորտի հետագա զարգացման տեսլականը հասկանալու համար, անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրություն իրականացնել հայաստանյան ներգնա զբոսաշրջությամբ զբաղվող տուրօպերատորների շրջանում:

Քանի որ ներգնա զբոսաշրջիկները տվյալ երկրի մասին հիմնական տեղեկատվությունը ձեռք են բերում համացանցից, և համացանցում ներկայացված տուրերի հիման վրա են սկսում հետաքրքրվել տվյալ տարածաշրջանով, ուստի հարկավոր էր պարզել Լոռու կարգավիճակը տուրօպերատորների առաջարկների մեջ: Այս պարագայում համեմատական մարզ ընտրվեց Շիրակը՝ որպես երկրի հյուսիս-արևմտյան և զբոսաշրջային ենթակառուցվածքների գրեթե նույն ծավալն ունեցող մարզ: Որպես հավելում հարկ է նշել, որ Տավուշի մարզն էլ գրեթե նմանօրինակ սահմանային դիրք և հյուրընկալման արդյունաբերություն ունի, սակայն ըստ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տրամադրած ցուցանիշների<sup>2</sup>, ծառայությունների ծավալով Տավուշի

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետության մարզերը թվերով, ՀՀ ԱՎԾ, 2013


մարզը նշանակալի զիջում է Լոռու մարզին (համեմատությունը ներկայացված է Գծապատկեր 3-ում): Այդ պատճառով էլ նախապատվությունը տրվեց Շիրակի մարզին:

**Լոռու և Շիրակի մարզերում 2009-2012թթ. ընթացքում զրոսաշրջության ոլորտի հետ առավելագույնս առնչվող ծառայությունների ծավալների համեմատություն**

*Աղյուսակ 1. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 2009 – 2012թթ.-ի ծառայությունների ծավալները Մլն./դրամ*

	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Լոռի	12312.3	14380.7	14932.5	14706.2
Շիրակ	14813.3	16098.7	16222.5	18491.9
Տավուշ	4187.1	5469.3	6025.1	5401.6

*Գծապատկեր 3. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 2009 – 2012թթ.-ի ծառայությունների ծավալների համեմատություն Մլն./դրամ*



Պարզորոշ երևում է, որ Շիրակի մարզում 2009-ից մինչև 2012 թվականը աճի նկատելի տարբերություն կա Լոռու մարզի հետ համեմատած:

Շիրակի մարզում 2012 թվականին 2009 թվականի նկատմամբ ծառայությունների ծավալի աճը կազմել է մոտ 25%, իսկ Լոռու մարզում՝ 19%:

*Աղյուսակ 2. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալների համեմատություն Մլն./դրամ*


Կացության և հանրային սննդի կազմակերպում				
	2009թ.	2010թ.	2011թ.	2012թ.
Լոռի	376.2	369.5	378.9	360.2
Շիրակ	361.3	693.0	773.5	1035.9

*Մլն./դրամ*


Year	Lori	Shirak
2009	376.2	361.3
2010	369.5	693.0
2011	378.9	773.5
2012	360.2	1035.9




*Աղյուսակ 3. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ. -ի կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալների համեմատություն Մլն./դրամ*




*Աղյուսակ 4. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ. -ի տեղեկատվության և կապի ծավալների համեմատություն Մլն./դրամ*



*Աղյուսակ 5. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ. -ի Տրանսպորտի ծառայությունների ծավալների համեմատություն Մլն./դրամ*



*Աղյուսակ 6. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի  
Սպասարկման այլ ծառայությունների ծավալների համեմատություն  
Մլն./դրամ*



Այս փոփոխությունները պայմանավորված են ոչ միայն զբոսաշրջիկների քանակով, այլ նաև ներքին շուկայով: Ինչը հավաստում է ստորև ներկայացված աղյուսակը՝ կապված թանգարանների այցելությունների թվաքանակի հետ:

*Աղյուսակ 7. Լոռու և Շիրակի մարզերում 2011թ. թանգարանների այցելուների թվաքանակը*

	Այցելությունների թվաքանակը						Այլ թվում՝	
	ընդամենը			Նրանցից՝ սովորողներ			վճարովի	անվճար
	Ընդամենը	Անհատներ	Էքսկուրսիաներ	Ընդամենը	Անհատներ	Էքսկուրսիաներ		
Լոռի	19922	8430	11492	11273	3030	8243	8382	11540
Շիրակ	51161	18197	32964	24331	5498	18833	1662	49499

2011 թվականին մոտ 2.5 անգամ ավելի շատ մարդ է այցելել Շիրակի մարզի թանգարանները, այն դեպքում, երբ Լոռու մարզում դրանց թիվը 10-ն է, իսկ Շիրակում՝ 8-ը, (ակնհայտ է, որ թանգարանների բազմազանության խնդրով չէ պայմանավորված այցելությունների հսկայական տարբերությունը):

*Աղյուսակ 8. Մարզային և համայնքային ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպությունների բաշխվածությունն ըստ Լոռու և Շիրակի մարզերի<sup>3</sup>*

Մարզը	Բնակչության թիվը (հազ.բն.)	Համայնքների թիվը	Դիտարկված համայնքների թիվը	Համայնքների թիվը, որտեղ մշակութային կազմակերպ. չկան	Մշակույթի տներ (կենտրոններ)	Թանգարաններ	Գրադարաններ	Թատրոններ	Համերգային կազմակերպություններ	Երաժշտ. դպրոցներ	Սրվեստի դպրոցներ	Գեղարվեստի դպրոցներ	Այլ մշակութային կազմակերպություններ	Ընդամենը
Լոռի	217.1	113	64	49	55	10	74	4	2	10	9	3	2	170
Շիրակ	233.3	119	57	40	32	8	54	2	1	16	5	4	4	126

<sup>3</sup> ՀՀ Կառավարության որոշում, 5 ապրիլի 2007 թվականի N 589-Ն ՀՀ մարզերում մշակույթի զարգացման ծրագրերը հաստատելու մասին

ՀՀ-ի մարզերում և համայնքներում մշակութային կազմակերպություններն են՝ մշակույթի տները և ակումբները, գրադարանները, թանգարանները, արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցները, համերգասրահները և կինոթատրոնները, պատկերասրահները և ցուցասրահները, ստեղծագործական խմբերը, կենտրոններն ու համույթները:


Մշակութային կազմակերպությունների առկայությունը դեռևս չի նշանակում ակտիվ մշակութային կյանք, քանի որ դրանց մեծ մասը կարիք ունի հիմնանորոգման և նյութատեխնիկական հագեցվածության բարելավման:

Ներկայումս մշակույթի ոլորտի խնդիրները Լոռու մարզում համակարգված լուծում չեն ստանում, ինչը պայմանավորված է մի շարք օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով: 1996 թվականից հետո մշակութային կազմակերպությունները անցան տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայությանը, սակայն ոչ բարվոք տնտեսական իրավիճակը, ընդհանուր ռազմավարական և զարգացման հեռանկարային (տարածաշրջանին հատուկ) համագործակցության ծրագրերի բացակայությունը հնարավորություններ չեն ընձեռնում Լոռու մարզում մշակութային կյանքի արդյունավետ և լիարժեք գործունեության կազմակերպմանը:

Արդյունքում՝ դիտարժան և բարվոք մշակութային ենթակառուցվածքների խիստ պակաս է զգացվում, ինչը մարզի մշակութային հատվածները թե՛ ներքին, թե՛ ներգնա այցելությունների հյուրընկալման համար ցանկալի արդյունքներ չեն ապահովում:

Հայաստանում գործող առաջատար 20 տուրօպերատորի կայքերի դիտարկումից պարզվեց, որ նրանք Լոռում մեծ ուշադրություն են ցուցաբերում հատկապես Գծապատկեր 4-ում ներկայացված ուղղությունների հանդեպ:

*Գծապատկեր 4. ՀՀ տուրօպերատորների նախընտրելի զբոսաշրջության տեսակները Լոռու մարզում*



Կրոնական և պատմամշակութային տուրերում Լոռին ավելի շատ է ընդգրկված, ինչը հիմնականում պայմանավորված է ՅՈՒՆԵՍԿՕ-ի մշակութային ժառանգության կազմի մեջ ընդգրկված Հաղպատի և Մանահինի վանական համալիրներով:


Արկածային և հետիոտն զբոսաշրջության տեսակների մեջ նույնպես գերակշռում է Լոռին, ինչն էլ հավանաբար պայմանավորված է Լոռու մարզում ռելիեֆի բազմազանությամբ:

ՀՀ այլ մարզերի հետ համեմատած Լոռու մրցունակությունը պայմանավորված է նաև գտնվելու վայրի առանձնահատկությամբ, ինչը Լոռու մոտ ընդգծված առավելություն է՝ ցամաքային անցակետ դեպի Վրաստան և սևծովյան տարածաշրջան:

Տարածաշրջանային երթուղիների խնդիրները այսօր շատ արդիական են, քանի որ համաշխարհային զբոսաշրջային շուկայում զբոսաշրջային արդյունքի խոշորագույն սպառողները այս տարածաշրջանում նախընտրում են տարածաշրջանային զբոսաշրջային փաթեթներ, օրինակ՝ Իրան-Հայաստան-Վրաստան: Հարկ է նշել, որ տարածաշրջանային երթուղիները Հայաստանի զբոսաշրջության ոլորտի ամենահեռանկարային ուղղություններից են համարվում:

Լոռում ՀՀ տուրօպերատորների նախընտրելի զբոսաշրջության տեսակների ցանկը հարկավոր է ընդլայնել՝ հատնողական և կազմակերպչական աշխատանքներ իրականացնելով: Գծապատկեր 5-ում ներկայացված են մարզում հեռանկարային համարվող զբոսաշրջության տեսակները:

*Գծապատկեր 5. Լոռու մարզում զբոսաշրջության հեռանկարային տեսակները*



Լոռին եզակի զբոսաշրջային արդյունք առաջարկելու զգալի ներուժ ունի շնորհիվ իր կլիմայական պայմանների, առանձնահատուկ խոհանոցի և բնական ռեսուրսների:

Զբոսաշրջության ոլորտում գործարարություն նախաձեռնելիս հարկ է ուշադրությունը սևեռել Գծապատկեր 5-ում ներկայացված Լոռու մարզի առանձնահատկություններին բնորոշ զբոսաշրջության հեռանկարային տեսակներին: Վերոնշյալ տեսակները կարող են մարզին առաջատարություն ապահովել Հայաստանյան զբոսաշրջային շուկայում:

Հեծանվային, ճանաչողական, հնէաբանական և այլ տեսակի տուրերում Լոռին և Շիրակը գրեթե նույն ծավալներով են ընդգրկված: Համանման պատկերն է նաև մարզերում գիշերակաց ապահովող տուրերի մեջ. զբոսաշրջային կազմակերպությունների գերակշիռ մասը նախընտրում են նույն օրը վերադառնալ Երևան, և խուսափում են փաթեթների մեջ ընդգրկել մարզային հյուրանոցներ:

Ներգնա զբոսաշրջիկները պահանջում են անվտանգություն, առողջապահություն, հիգիենայի և սանիտարական պայմանների բարձր մակարդակ, որոնց որակի համապատասխանությունը մարզային ենթակառուցվածքներում անվստահության տեղիք են տալիս: Սակայն վերջին տասնամյակում Լոռու մարզում վերոնշյալ հաստատությունների որակական փոփոխությունների առաջընթացը նկատելի է:

## **ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ**

Լոռու մարզի պատմաճարտարապետական հուշարձանները իրենց քանակով, բազմազանությամբ ու արժեքայնությամբ առանձնահատուկ տեղ են գրավում Հայաստանի այլ մարզերի նմանտիպ կոթողների շարքում: Դրանք գալով դարերի խորքից՝ սերունդներին են ներկայացնում մեր ժողովրդի բազմադարյան նյութական մշակույթի ակնառու նվաճումները: Լոռու մարզում մարդու մշակութային գործունեության հետքերը գալիս են հնագույն ժամանակներից մինչև մեր օրերի նորակառույցները:

Դրանց մեջ մտնում են պատմական բնակատեղիներ, ամրոցներ, վանական համալիրներ, եկեղեցիներ, կամուրջներ, աղբյուրներ, մահարձան-կոթողներ, խաչքարներ ու աշխարհիկ կամ կենցաղային շինություններ:


12-13-րդ դդ. Լոռու ճարտարապետության ամենաբուռն ծաղկման շրջանն է համարվում: Այդ ընթացքում տարածքը վրաց իշխանների՝ Օրբելյանների և Զաքարյանների սեփականությունն էր, ուստի այդ ժամանակաշրջանում Լոռին Վրաստանի հետ ապրել է միևնույն սոցիալ-տնտեսական, մշակութային և դավանաբանական կյանքով, և անխուսափելի էր երկու ժողովուրդների մշակութային, այդ թվում՝ ճարտարապետական հուշարձանների ոճական նմանությունները: Դա վերաբերում է հատկապես Ախթալայի և Քոբայրի վանքերին, Բզավորի, Հնեվանքի, Մեծավանի և մի շարք այլ եկեղեցիներին: Ցավոք մեզ չեն հասել կամ հասել են գրեթե ավերակ վիճակում քաղաքներն ու ամրոցները:

Հավելվածներ 2-4-ում ներկայացված են ոչ միայն զբոսաշրջային առօրյաում առավել շատ այցելվող տեսարժան վայրերը (օրինակ՝ Հաղպատ, Օձուն, Սանահին, Հնեվանք, Լոռեբերդ, Քառասնից մանկանց վանք, Քոբայր, Արդվի, Կուսանաց անապատ, Խորակերտի վանք, Զախալաբերդ, Խուճապի վանք), այլև պատմաճարտարապետական այնպիսի հուշարձաններ և տեսարժան վայրեր, որոնք ունեն բազմաթիվ արժանիքներ տուրփաթեթների մեջ զետեղվելու, սակայն դուրս են մնացել տուրօպերատորների ուշադրությունից և մատնվել են մոռացումի:

**ԼՈՒՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԷԿՈԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Վերջին տարիներին Լոռու մարզում նկատվում է էկոտուրիզմի և բնության հետ կապված զբոսաշրջության պահանջարկի կտրուկ աճ: Էկոզբոսաշրջությունը իր մեջ ներռում է բնական հուշարձանների, պահպանվող տարածքների ուսումնասիրությունը, ինչպես նաև ներառում է զբոսաշրջության մի քանի տեսակներ՝ կիրճագնացություն, լեռնագնացություն, անտառային զբոսաշրջություն, գեո-զբոսաշրջություն և այլն:

*Գծապատկեր 6. Լոռու էկոզբոսաշրջության զարգացման համար բացակայող ռեսուրսները*



Լոռին ունի բոլոր անհրաժեշտ ռեսուրսները զբոսաշրջության այս տեսակը զարգացնելու համար: Էկոտուրիզմը ավելի է պահանջում ենթակառուցվածքների հանդեպ ուշադրություն, որոնք Լոռու մարզում բավականին թերի են: Մարզի ճանապարհային ցուցանակների քանակը գոհացուցիչ քանակով չէ տեղադրված, և տեղեկատվական ցուցանակները, որոնք անհրաժեշտ են բնության հատուկ պահպանվող տարածքներին կից բնակատեղիներում և հաճախակի այցելվող վայրերում, բավարար քանակով չեն կամ բացակայում են:

Էկոտուրերում կացարանները պետք է լինեն վրանային, ճամբարային, լեռնային խրճիթների և այլ պարզունակ տեսքերով: Էկոզբոսաշրջության զարգացման համար անհրաժեշտ է ապահովել վերոնշյալ ենթակառուցվածքների համակարգը:

Լոռին կարիք ունի էկոզբոսաշրջության մեջ կիրառվող կացարանների, որոնք պետք է գործեն էկոտուրերի նշագծված արահետներին կից վայրերում, նմանատիպ կարիք կա նաև սննդի սպասարկման դաշտում: Հարկավոր է հաշվի առնել այն, որ սրանք բնության հատուկ պահպանվող տեղանքներին կից են գործունեություն ծավալելու, ու դրանց սանիտարահիգիենիկ և քաղաքաշինական այլ պահանջներ են ներկայացվում:


Եթե չկան ճշգրիտ մշակված արահետներ, ապա էկոզբոսաշրջությունը կարող է բացասաբար ազդել շրջակա միջավայրի վրա: Ուստի Լոռում զբոսաշրջության այս տեսակի զարգացման համար անհրաժեշտ է մեծ հետևողականություն և ճշգրիտ կառավարման համակարգի ձևավորում:

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ԱՌՈՂՋԱՐԱՆԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԸ**

Լոռու մարզը նպաստավոր տարածաշրջան է առողջարանային զբոսաշրջության կազմկերպման համար:

Լոռու մարզն ունի բնական և մարդածին ռեկրեացիոն բազմաթիվ ռեսուրսներ: Մարզի բնական ռեկրեացիոն ռեսուրսներից գործնական կարևոր նշանակություն ունի Գծապատկեր 7-ում ներկայացվածը:

*Գծապատկեր 7. Լոռում առողջարանային ներուժի հիմնական ռեսուրսները*



Ռեկրեացիոն ռեսուրսների պահպանումը, վերականգնումն ու օգտագործումը հրատապ խնդիրներ են հանդիսանում համաշխարհային տնտեսության բուռն զարգացման արդի պայմաններում, երբ շրջակա միջավայրը ավելի ու ավելի մեծ չափերով է աղտոտվում:

Վերոնշյալ բնական ռեկրեացիոն ռեսուրսները առողջարանային զբոսաշրջության բնագավառում մեծ հետաքրքրություն են ներկայացնում և մարզում հյուրընկալման զարգացման նախապայմաններ են հանդիսանում:

Առողջարանային հանգստի կազմակերպման համար շատ նպաստավոր է Վանաձոր քաղաքը, Դեբեդ գետի ավազանը, Լոռու սարահարթը: Վանաձորը հայտնի է իր վերականգնողական առողջավայրով, որտեղ բուժում են սիրտ-անոթային համակարգի, ստամոքս-աղիքային տրակտի, հենաշարժական ապարատի քրոնիկական հիվանդությունները: Բուժման միջոցներ են մեղմ կլիման, տորֆաբուժությունը, ռադոնային լոգանքները, ինչպես նաև «Լոռի» հանքային ջուրը:

Լոռու մարզի բնական և մարդածին ռեկրեացիոն ռեսուրսները, որոնք այսօր շատ քիչ չափով են օգտագործվում զբոսաշրջային շուկայում, կարող են դառնալ կարևոր տարրեր միջազգային նշանակություն ունեցող հանգստի ու զբոսաշրջության այնպիսի արդյունաբերություն ստեղծելու համար, որը նշանակալի դեր կունենա Հայաստանի Հանրապետության տնտեսության համար:

## **ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ**

Լոռու տարածքը հարուստ է նաև հանքային ջրերի ելքերով, որոնք կարևոր տնտեսական նշանակություն ունեն: Այստեղ հանքային աղբյուրների առատությունը բացատրվում է ինչպես ռելիեֆի խիստ մասնատվածությամբ և էրոզիայի բազիսի խորությամբ, այնպես էլ հանքային ջրերի արտաբխման (բեռնաթափման) հարմար ուղիների առկայությամբ:

Վանաձորի հանքային աղբյուրները դուրս են գալիս քաղաքի շրջակայքում: Ոչ խորը հորատման միջոցով բազալտային լավաներից ստացվել են հանքային ջրերի խոշոր շիթեր, որոնց ծախսը կազմում է 2,5-10 լ/վրկ.: Այն Ջերմուկի ջրերի ամենամոտ նմանակն է:

Ֆիոլետովոյի հանքային ջուրը դուրս է գալիս գյուղի շրջակայքում արված հորատանցքերից:

Հետախուզվել են նաև Բզովդալի (Վանաձորի մոտ) հիդրոկարբոնատասուլֆատային, նատրիում-կալցիումային հանքային ջրերը:

Ստեփանավանի շրջակայքում բխում են մի խումբ հանքային աղբյուրներ, որոնցից է Կաթնաղբյուրի ակները: Մեծ ծավալի հետախուզական աշխատանքներ են կատարվել Կաթնաղբյուր գյուղի (Ստեփանավանի տարածաշրջան) աղբյուրների շրջանում: Ուրասար (Կուբիշև) գյուղի մոտ հայտնի են Չյոռնայա և Ժյոլտայա գետակների աղբյուրները:

Դեբեդ գետի ավազանում, բացի վերը նշվածներից, հաշվվում են մոտ 35 զանազան հանքային աղբյուրներ, որոնք դեռ լիարժեք չեն ուսումնասիրվել:

Հանքային ջրերի ուսումնասիրությունը, հետախուզումը կարևոր տնտեսական նշանակություն ունեն և հարկավոր է մարզի առաջնային խնդիրներից մեկը համարել:



**ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ  
ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԸ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑԱՏԻՊ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԸ**

Լոռու մարզում ներկայումս գործում են մի շարք հյուրանոցներ, առողջարաններ, հյուրատներ և գիշերակացի այլ հաստատություններ, որոնց ննջատեղերի քանակը բավարարում է մարզում զբոսաշրջային գործունեության ծավալներին: Մարզում առկա հյուրանոցային տնտեսությունները միաժամանակ կարող են ապահովել մոտ 1300 ննջատեղ (մոտ 600 սենյակ): Դրանցից 900-ը քաղաքային բնակավայրերում է, իսկ 400-ը՝ գյուղական համայնքներում:

Մարզի հյուրանոցային տնտեսության ռեսուրսները գտնվում են հետևյալ բնակավայրերում.

Քաղաքներ – Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի, Ստեփանավան

Գյուղեր – Շահումյան, Նեղոց, Զորագետ, Հաղպատ, Օձուն, Դսեղ, Վահագնաձոր, Փամբակ

*Աղյուսակ 9. Լոռու մարզի հյուրանոցային և առողջարանային ներուժը  
(ոչ պաշտոնական պայմանական գնահատում)*

Հյուրանոց / Առողջարան  Քաղաք / Գյուղ	1*			2*			3*			4*			5*		
	Հյուանոց քանակ	Համար. քանակ	Ննջատ. քանակ	Հյուանոց քանակ	Համար. քանակ	Ննջատ. քանակ	Հյուանոց քանակ	Համար. քանակ	Ննջատ. քանակ				Հյուանոց քանակ	Համար. քանակ	Ննջատ. քանակ
ք. Վանաձոր	1	8	14	2	21	46	4	139	259						
գ. Շահումյան				1	25	48									
ք. Սպիտակ	1	6	12												
ք. Ստեփանավան	5	115	280	3	64	172									
ք. Ալավերդի	2	21	44	1	15	33									
գ. Զորագետ													1	54	107
գ. Հաղպատ				1	18	30	1	14	28						
գ. Օձուն				1	19	62									
գ. Վահագնաձոր	1	5	10												

ՀՀ-ի աստղային համակարգում գտնվող հյուրանոցներից ոչ մեկը չի գտնվում Լոռիում:

Հետազոտության համար աստղային տրոհումը պայմանավորված է կայքերում տվյալ հյուրանոցին շնորհված աստղերով, առաջարկվող լրացուցիչ ծառայություններով, սենյակների կահավորմամբ և սանիտարա-հիգիենիկ պայմաններով:

*Աղյուսակ 10. Լոռու մարզի հյուրատների,  
B&B-ների ներուժը*

Հյուրատուն Քաղաք / Գյուղ	B&B քանակ	համար. քանակ	ննջատ. քանակ
ք. Վանաձոր	4	19	42
ք. Սպիտակ	1	3	6
ք. Ստեփանավան	6	13	28
գ. Նեղոց	1	2	4
ք. Ալավերդի	5	27	57
գ. Հաղպատ	6	23	50
գ. Օձուն	5	17	30
գ. Դսեղ	3	6	18
գ. Վահագնաձոր	2	9	18
գ. Փամբակ	1	1	1

Վերոնշյալ հյուրանոցների, առողջա-  
քանների և հյուրատների մասին  
մանրամասն տեղեկատվություն կարող եք  
ստանալ՝ գրելով հետևյալ հասցեին:

Lori.tourinfo@gmail.com

Մարզի գործող հյուրանոցները բարվոք  
վիճակում են գտնվում, պարզապես նրանք համապատասխան գովազդային  
գործունեություն չեն ծավալում, որպեսզի արժանանան տուրօպերատորների  
ուշադրությանը՝ որպես հուսալի գիշերակաց ապահովող հանգրվաններ:

Լոռվա մարզի գյուղերը ապահովված են կենցաղի բավարար պայմաններով, որոշները  
գազաֆիկացված են, ճանապարհներն անցանելի են: Բացի հյուրատներից գյուղերում կան  
այնպիսի բնակարաններ, որոնք կարող են ծառայել որպես հյուրատներ:

Գյուղերում կան տներ, որոնք դեռ ունեն հին կառուցվածքային ոճ, հնամենի կահույք և  
ազգային կիրառական իրեր: Սրանք հետաքրքիր ցուցադրավայրեր կարող են  
հանդիսանալ զբոսաշրջիկների համար և լոռեցու առատաձեռ, հյուրասեր ընտանիքը  
անմոռանալի հուշեր կթողնի հյուրերի մոտ:

Գյուղերում գործում են առաջնային բուժօգնության կետեր: Լոռվա մարզի բոլոր  
համայնքներում հասանելի է համացանցը և բջջային կապը:

## ԱՎԱՆԴԱԿԱՆ ԽՈՂԱՆՈՑ ԳԱՍՏՐՈՆՈՄԻԿ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Ազգային խոհանոցը ձևավորվում է դարերի ընթացքում և հանդիսանում է ազգային  
նկարագրի վառ օրինակ: Բազմաթիվ զբոսաշրջիկներ ճանապարհորդության ընթացքում  
կարևորում են համեղ սնվելը և իհարկե ազգային խոհանոցի առանձնահատկություններով  
համեմում են իրենց հիշողությունները:

Լոռու մարզի խոհանոցն ունի ճանաչման խնդիր հենց հայ ժողովրդի կողմից, ուստի  
հարկավոր է նաև ներքին զբոսաշրջության մեջ կիրառել այնպիսի տուրեր, որոնց միջոցով  
կբացահայտվի և տարածում կգտնի Հայաստանի հյուսիսային մարզերից մեկի  
խոհանոցային արվեստը: Լոռու մարզի խոհանոցը պահպանել է հայկական խոհանոցի  
ընդհանուր դիմագիծը, սակայն ունի որոշ յուրահատկություններ:

Հետազոտության ընթացքում կատարված հարցումների արդյունքում արձանագրվել են մի  
քանի ուտեստներ, որոնք հիմնականում բնորոշ են Լոռու մարզին: Դրանք ներկայացված  
են ստորև.

Հացի խաշու - Հացը խորանարդաձև կտրատում և չորացնում են: Սոխեռածը լինելու  
ընթացքում կաթսայի մեջ ավելացնում են 1 բաժակ ջուր: Մասսան համեմում են աղով և  
մանր կտրատած համեմով: Եռալուց հետո անընդհատ խառնելով ավելացնում են հարած  
ձու: Թողնում են 10 րոպե եփի: Մատուցելուց 5 րոպե առաջ կաթսան կրակի վրայից  
վերցնում են և ավելացնում նախապես պատրաստած հացի կտորները:

Հոնով ապուր - Հոնը քիչ ջրով եռացնում են և թողնում մի քիչ հովանա: Այնուհետև փլավքամի մեջ տրորում են մինչև կորիզների առանձնանալը: Ստացվում է համասեռ թանձր զանգված: Մասսայի մի մասի մեջ անընդհատ հարելով ավելացնում են այուր, և խառնում մնացած զանգվածին: Ավելացնում են շաքարավազ և դնում կրակին: Մատուցվում է սառը վիճակում:



Խաշի - Ջուրը համեմուն են աղով և կրակի վրա անընդհատ խառնելով ավելացնում փողինձը (բոված, աղացած հացահատիկ): Պետք է եփել այնքան, մինչև համասեռ զանգված ստացվի: Լցնում են ափսեների մեջ և վրան դնում մի կտոր կարագ:



Խորոված կարտոֆիլ / պլեճ - Կարտոֆիլը կեղևազրկում են և օղակաձև կտրատում (կամ լավ լվանում և առանց կեղևազրկելու կտրատում): Տաք վառարանի վրա աղ են ցանում, և կտրտած կարտոֆիլը շարում վրան, և նորից աղ ցանում: Երկու կողմը համաչափ խորովելուց հետո կարելի է ճաշակել: Պլեճը պետք է ուտել տաք վիճակում:



Մարինացված սինդրիկ - Սինդրիկը խաշում են, հանում տաք ջրից և դնում հոսող ջրի տակ, որ պահպանի կանաչ գույնը: Աղաջուրը լցնում են վրան: Կարելի է համտեսել հաջորդ օրը:

Լավաշով մոթալ - Մոթալի պատրաստման ձև՝ մանրացրած պանիրը, մանրացրած թելպանիրը (ջիլ), քամած կաթնաշոռը, քամած մածուկը խառնում են և համեմուն աղով, ըստ ճաշակի: Ստացված զանգվածը լցնում են կավե սափորի մեջ, գլխիվայր շրջում և պահում սառը վայրում առնվազը 10 օր: Լավաշը բացում են, մոթալը լցնում են վրան, փաթաթում և համտեսում:

Եղինջի ապուր- Կաթսայի մեջ սոխեռած են անում, ավելացնում ջուր, խորանարդաձև կտրտած կարտոֆիլ: Կիսաեփ վիճակում ավելացնում են եղինջ: Թողնում են 5 րոպե եռա: Եփման վերջին րոպեներին ավելացնում են հարած ձու, կտրտած համեմ և աղ: Ճաշատեսակը հնարավոր է պատրաստել նաև չորացրած եղինջից, որը պետք է նախապես թրջել տաք ջրի մեջ:



Ավելուկի աղցան - Նախապես չորացրած եփում խաշում են տաք ջրով և մանր կտրատում: Կաթսայի սոխեռածին ավելացնում են կտրտած ավելուկը և տապակում 5-10 րոպե, այնուհետև ավելացնում են աղ և համեմունքներ: Մատուցում են մածուն-սխտորով:

Նապաստակի խորոված - Նապաստակի կտրատած միսը համեմուն են աղով, ուրցով/քոնդարով և սոխով: Միսը մի քանի տեղից ծակծկում են պատառաքաղով: Թողնում են 20 րոպե: Շարված շերտը իջեցնում են թոնիրի մեջ: 1 ժամ եփելուց հետո հանում են թոնրից, սոխ և կտրտած համեմ ցանում վրան և մատուցում:



Թել պանիրով ձվածեղ - Անալի թել պանիրը (ջիլ) (կամ եթե աղ դրած է, նախապես 2 ժամ թողնում են ջրի մեջ) նախօրոք մանրացնում են: Թավայի մեջ լցնում են կարագ, այն դաղվելուց հետո ավելացնում են թել պանիրը և անընդհատ խառնում: Համասեռ մասսա դառնալուց հետո, ավելացնում են հարած ձու: Մատուցվում է տաք վիճակում:

Թթուներ տարբեր խոտաբույսերից – Մարզը հարուստ է խոհանոցում օգտագործվող տարատեսակ խոտաբույսերով, որոնց օգտագործման սեզոնը շատ կարճ է: Դրանցից թթուներ կամ մարինադներ են պատրաստում և պահածոյացնում ոչ սեզոնների համար: Կատարված հարցումների ժամանակ որոշ ուտեստներ էլի հիշատակվել են, սակայն դրանք բնորոշ են ընդհանուր հայկական խոհանոցին, օրինակ՝ խաշլամա, տարբեր բանջարեղեններով և խոտաբույսերով կերակրատեսակներ, թանով ապուր և այլն:



Տուրօպերատորների հետ ունեցած հանդիպումների ժամանակ պարզ դարձավ, որ զբոսաշրջային շուկայում Լոռին հայտնի է նաև իր հատապտուղներով: Եթե տեսարժան վայրերին կից պատշաճ տարրաներով գյուղացիները դրանք կարողանան մատուցել զբոսաշրջիկներին, ապա ուղղակի անխուսափելի կլինի լավ սպառումը և սեզոնային եկամտի ապահովումը:



Վերոնշյալ ուտեստները գյուղական և գաստրոնոմիկ զբոսաշրջության կազմակերպման մեջ կարող են հետաքրքրություն առաջացնել: Հատկանշական է, որ արդեն որոշ գյուղատնտեսների տներում կան համապատասխան պայմաններ ուտեստների պատրաստման գործընթացին

մասնակցելու համար:

Մարզում ագրոտուրիզմի խթանիչ գործոններից մեկը կարելի է դիտել նաև Լոռում ոչ ավանդական և ավանդական բույսերի մշակումը: Օրինակ՝ մարզի մշակովի ոչ ավանդական բույսերից են դափնու տերևը, զկեռը (նաև անմշակ), նուռը, կիվին, բրուսելյան կաղամբը: Իսկ անմշակ ոչ ավանդական մշակաբույսերից են լոբենին, ծնեբեկը, սինդրիկը, ավելուկը, ռոհունդը, խաշխաշը (դեղաբույս), թրթնջուկը, շուշանը և այլն: Այս ամենի մշակման գործընթացը և համատեսումը լայնորեն կարող է կիրառվել ագրոտուրիզմի ծրագրերի մեջ:

Հարկ է հիշատակել նաև «Լոռի» պանիրը, որը այսօր մարզի այցեքարտերից մեկն է համարվում:

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՂ  
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԵՆՐ**

Լոռու մարզում վերջին տարիներին մշակութային և իրադարձային միջոցառումների կազմակերպման ոլորտում նկատվում է աշխուժություն: Կազմակերպվում են ազգային և պետական տոներին նվիրված միջոցառումներ, հոբեյանական երեկոներ: Մեծ հանդիսավորությամբ անց են կացվում ավանդույթ դարձած մի քանի տոնախմբություններ:

*Աղյուսակ 11. Լոռու մարզի տոնակատարությունները*

Միջոցառման անվանումը	Վայրը	Ժամկետը
«Թատերական Լոռի»	Ալավրդի	Սեպտեմբեր
«Լոռվա Ձմեռ» մարզատոնահանդես	Թեժ լեռ	Փետրվար
«Ծաղկի տոն»	Ստեփանավան	Հուլիս-Օգոստոս
«Վանաձորի օր»	Վանաձոր	Հոկտեմբեր
«Բերքի տոն»	Համայնքներ	Հոկտեմբեր
«Թումանյանական հեքիաթի օր» տիկնիկային թատրոնների միջազգային փառատոն	Դսեղ	Սեպտեմբեր
«Խորովածի փառատոն»	Ախթալա	Սեպտեմբեր
«Պանրի փառատոն»	Տաշիր	Սեպտեմբեր-Հոկտեմբեր
Տեառնընդառաջի արարողություն	Մարզի տարբեր գյուղական համայնքներ	Փետրվար
Վարդավառի տոնակատարություն	Մարզի տարբեր գյուղական համայնքներ	Հուլիս

Վերոնշյալ տոնակատարություններից առանձնահատուկ ձևով նշվում է «Լոռվա ձմեռ»-ը, «Թումանյանական հեքիաթի օր»-ը և «Բերքի տոն»-ը: Վերջինս նշվում է մեծ շուքով. յուրաքանչյուր գյուղ տոնական շքերթի է դուրս գալիս իրեն բնորոշ բարիքներով: Տեղական հատապտուղներով ու բույսերով զարդարված սեղանները իրենց գունեղ և համային բազմազանությամբ հիացմունք են պատճառում: Իսկ տաղավար-սեղանների վրա ներկայացված գյուղի բարիքները, ազգային ու տեղանքին բնորոշ խորտիկները առատորեն հյուրասիրում են բոլոր այցելուներին:

Լոռու մարզում արդեն ավանդական է դարձել Ախթալայի «Խորովածի փառատոն»-ը և այն լայնորեն ընդգրկվում է ներգնա զբոսաշրջիկների համար նախագծված տուրերում:

«Լոռվա Ձմեռ» մարզատոնահանդեսը 1968 թվականից մինչ օրս կազմակերպվում է Թեժ լեռում, որը Փամբակի լեռնաշղթայի ամենաբարձր լեռնագագաթն է (3101 մ) ՀՀ Լոռու և Կոտայքի մարզերի սահմանագլխին:

Իսկ «Թումանյանական հեքիաթի օրեր»-ը մարզի ամենացանկալի և սպասված տոնախմբությունն է դարձել, որին տարեց տարի մասնակցում են բազմաթիվ տիկնիկային թատրոններ և թատերախմբեր Հայաստանից, Արցախից և տարբեր այլ երկրներից:


Նման տոնակատարությունները ճամփորդության ընթացքը գունավորում են և անմոռանալի տպավորություններ են թողնում ազգային ավանդույթներով հետաքրքրված զբոսաշրջիկների հուշերում:

*Աղյուսակ 12. Լոռու մարզի ագրոտուրիզմի զարգացմանը միտված արարողություններ*

Արարողություն	Ժամկետ
Թուֆ թափ տալու արարողություն	Հունիս-Հուլիս
Հոնի, վայրի տանձի (պանդայի) հավաքում և օղու պատրաստում	Սեպտեմբեր-Հոկտեմբեր
Մասնակցություն հատապտուղների հավաքման, պահածոների պատրաստում	Հուլիս
Մասնակցություն մեղր սարքելու արարողության, մեղրի համտես	Օգոստոս
Մասնակցություն եղնու կոնից մեղր սարքելու արարողության	Մայիս-Հունիս
Մասնակցություն կճուճներում պանրի հորման արարողության	Հունիս-Օգոստոս
Կճուճում մածուն մերելու արարողություն	12 ամիս
Հաց, լավաշ թխելու արարողություն	12 ամիս
Արիշտայի պատրաստում	12 ամիս
Մասնակցություն ընկույզի բերքահավաքին	Սեպտեմբեր
Մասնակցություն մրգերի բերքահավաքին	Սեպտեմբեր-Հոկտեմբեր
Մասնակցություն մրգերից օղիների պատրաստման արարողությունների	Հոկտեմբեր-Նոյեմբեր

Լոռու մարզում ագրոտուրիզմի զարգացմանը միտված վերոնշյալ արարողությունները հիմնականում գաստրոնոմիական զբոսաշրջության տարրեր են հանդիսանում: Եվ դրանք զուգորդելով գյուղական զբոսաշրջության հետ՝ ստացվում են առանձնահատուկ տուրապրանքներ, որոնք նոր շունչ կարող են հաղորդել հայաստանյան զբոսաշրջային շուկային:


*Գծապատկեր 8. Լոռու ագրոտուրիզմի զարգացմանը միտված արարողությունների բազմազանությունը, խոչընդոտները և ընձեռնած հնարավորությունները*



## ՀՈՒՇԱՆՎԵՐՆԵՐ

Օտար երկրում հանգստի կամ գործնական նպատակով անցկացրած ժամանակը մարդիկ ցանկանում են իրենց հիշողություններում ամրագրել հուշանվերների միջոցով:

*Գծապատկեր 9. Լոռին խորհրդանշող հուշանվերների խթանմանը նպաստող գործոններ*



Հայկական սիմվոլների բազմազանությունը այսօր մեծ հնարավորություն է ընձեռնում տարատեսակ հուշանվերներ ստեղծելու համար:

Հուշանվերների դերը կարևորվում է այնքանով, որ դրանց վրա դաջված անվանումները, պատկերները տվյալ տարածաշրջանի համար ապահովում են երկարատև անուղակի գովազդ:

Հուշանվերների փաթեթավորումների վրա պետք է նաև մեծ ուշադրություն դարձնել, քանի որ դրանց մեջ էլ է արտահայտվում տեղական առանձնահատկություններին բնորոշ տարրեր: Զբոսաշրջային հուշանվերները պետք է լինեն կիրառելի կամ այնպիսի առարկաներ, որոնք միշտ կլինեն տեսադաշտում, օրինակ՝ բաժակ:

Հարկավոր է ստեղծել Լոռվա ամենաակնառու խորհրդանիշներով հուշանվերներ, որոնք ամբողջությամբ կբնորոշեն Հայաստանի հյուսիսային դարպաս հանդիսացող Լոռին:

## ԱՐՇԵՍՏՆԵՐ

---

Հետազոտության թիրախային ուղղություն համարվող գյուղական զբոսաշրջության համար փաթեթներ կազմելիս ցանկալի է համագործակցել նաև համայնքներում ապրող արհեստավորների հետ: Նրանց արհեստանոցները կարելի է ծառայեցնել որպես ցուցադրավայր և վարպետի պատրաստած փոքր հուշանվերներն էլ զբոսաշրջիկները կարող են տեղում գնել:

Լոռում կան փայտագործներ, խաչքար պատրաստող վարպետներ, գորգագործներ, քանդակագործներ, նկարիչներ, որոնց մի մասը հնարավորություն ունեն խմբեր հյուրընկալել իրենց արհեստանոցներում:

Հարկավոր է վերոնշյալ վարպետների տրամադրած ծառայությունները ներառել տուրփաթեթների մեջ:

### ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ՄԻ ՔԱՆԻ ՕՐ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՄԲ ՏՈՒՐԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐ

---

Տուրօպերատորների ծավալած գործունեությունը վերլուծելով՝ նկատելի է, որ դեպի Լոռու մարզ նրանց կազմած հիմնական տուրերը մեկօրյա բնույթ են կրում: Դրա պատճառներից մեկը պայմանավորված է նրանով, որ զբոսաշրջային կազմակերպությունները լիարժեք իրազեկված չեն մարզի հյուրանոցների, առողջարանների և հյուրատների ծառայությունների տրամադրման որակից:

Մարզի գիշերակաց ապահովող կազմակերպությունների ընդամենը մի մասն է համացանցում լիարժեք ներկայացված, և սրանով է դրսևորվում նաև նրանց հանդեպ ունեցած անվստահությունը:

Ներկայումս մարզում մահճակալ և նախաճաշ տրամադրող գյուղական հյուրատները բավականին լավ որակական չափանիշներ ունեն, թեև կան որոշ բացթողումներ, օրինակ՝ սանհանգույցները չեն ջեռուցվում:

Գյուղական համայնքներում գտնվող հյուրատների համար պետք է հետևողական գովազդային գործունեություն ծավալել, որպեսզի ապահովեն և՛ ճանաչվածություն, և՛ հուսալիություն, ինչը կբարձրացնի նաև նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակիը:

Եթե զբոսաշրջիկը գոնե երկու օր գիշերի մարզում, ապա հյուրընկալման ծառայությունների տրամադրման շնորհիվ համայնքների զարգացման տեսլականը ապահովված կլինի:

Մույն աշխատության «Հավելվածներ» բաժնում ներկայացված ենթակառուցվածքներն ու տոնակատարությունները, բնական ու պատմաճարտարապետական հուշարձանները, գյուղատնտեսի գործերին մասնակցությունը և հրապարակված այլ տեղեկատվությունը մեծապես կարող են նպաստել մարզում մի քանի օր տևողությամբ տուրեր կազմելուն:



Լոռում մի քանի օր տևողությամբ տուրեր կազմելու համար հետազոտության մեջ ներկայացվածը լիարժեք կարելի է կիրառել:

Հայաստանյան տուրփաթեթներում եթե կարճաժամկետ գիշերակացով տուր ապահովեն մեկ մարզում, ապա ներկայիս տուրփաթեթները գնային առումով մրցունակ կդառնան, և որոշ չափով կապահովեն մարզային բնակչության զբաղվածությունը (այսօր մարզային բնակչությունը բավարար չափով հաղորդակից չէ զբոսաշրջության ոլորտի զարգացման գործընթացներին):

*Աղյուսակ 13. Նամանատիպ տուրերի համեմատական աղյուսակ. (ՀՀ-ի համար - 3 օրը ապահովելու են մարզային հյուրանոցում)<sup>4</sup>*

Գերմանիայից 8 օրյա տուրի արժեքը  (ներառյալ էքսկուրսիաները) կազմում է		Հյուրանոց		Տրանսպորտ		8 օրյա տուրի արժեքը  (ՀՀ-ի համար - 3 օրվա հանգիստը կազմակերպվում է պատմամշակութային ռեսուրսներով հարուստ մարզերում)
		Երևանում 1 անձը	Սարգերում 1 անձը	Տուրի ընթացքում տրանսպորտի ծախսը 1 անձը (եթե գիշերում են Երևանում)	Տուրի ընթացքում տրանսպորտի ծախսը 1 անձը (եթե գիշերում են մարզերում)	
Հայաստան	€ 1600	1 օրը - € 55 (F/B) 3 օրը - € 165	1 օրը - € 18 (F/B) 3 օրը - € 54	Գնալը և ետդարձը յուր. էքսկուրսիայի համար - € 13 3անգամ - € 52	Եթե 3 օր հանգրվանում են մարզում, ապա 2 անգամ է վճ. - € 26	€ 1600 – (€ 165 + € 52) + + (€ 54 + € 26) =  <b>= € 1463</b>
Հորդանան	€ 1500					€ 1500
Ռուսաստան	€ 1400					€ 1400
Իսրայել	€ 1200					€ 1200

Համեմատության համար վերցրած փաթեթների գների մեջ նշանակալի մաս են կազմում հյուրանոցների գները:

Եթե հայաստանյան տուրօպերատորները այս փաթեթների 7գիշեր-8ցերեկից 3գիշեր-4ցերեկը անցկացնեն օրինակ Լոռու մարզում, որտեղ հյուրանոցատիպ հանգրվանները բավականին էժան են մայրաքաղաքային հյուրանոցների հետ համեմատած, ապա տուրփաթեթների գները էականորեն կնվազեն:


Վերոնշյալ մոդելի կիրառման պարագայում տուրփաթեթի գնի նվազման համար կարելի է նաև ընթացիկ էքսկուրսիաներին հատկացվող տրանսպորտային ծախսերը կրճատել:

<sup>4</sup> Ա.Ձ.Ոսկանյան, «ՀՀ զբոսաշրջության ոլորտում ինովացիոն գործունեության կառավարման հիմնախնդիրները» Ատենախոսություն, 2014թ. Երևան

Այսպիսով, միջին հաշվով, մեկօրյա էքսկուրսիայի համար տրանսպորտային ծախսը մեկ զբոսաշրջիկի համար €13 է, հետևաբար չորս օրվա համար՝ €52 (քանի որ նախատեսվում է 3գիշեր և 4 ցերեկ): Իսկ մարզերում գիշերակաց ապահովելու պարագայում պահանջվելու է միայն մեկ անգամ տրանսպորտային ծախս, քանի որ տվյալ մարզը հարուստ է զբոսաշրջային գործունեություն ծավալելու բազմաբնույթ տարրերով:

Դեպի Հայաստան հիմնական տուրփաթեթների մեջ եթե մի քանի օրը հատկացնեն Լոռուն, ապա հնարավոր է այդ հանգիստը զուգորդել նաև զբոսաշրջության հետևյալ տեսակներով.


*Գծապատկեր 10. Լոռու մարզում կարճաժամկետ տուրերի հնարավոր տեսակներ*



Լոռու մարզում զբոսաշրջության ոլորտի ցանկալի զարացումն ապահովող ընթացքը պահանջում է համապատասխան տեղեկատվական դաշտի ապահովում, իսկ մի քանի օր տևողությամբ տուրեր անցկացնելու համար հեռանկարային ուղղություններ կարող են հանդիսանալ Գծապատկեր 10-ում ներկայացված տեսակները:

Որպես հայաստանյան զբոսաշրջային շուկայում ընդհանրացված տուրապրանք, Լոռու մարզին բնորոշ առանձնահատկությունները շեշտադրելով հարկավոր է կիրառել մարզի մրցունակությունը բարձրացնող Գծապատկեր 11-ում ներկայացված նախապայմանները:

*Գծապատկեր 11. ՀՀ զբոսաշրջության ոլորտում Լոռու մարզի մրցունակության բարձրացման նախապայմաններ*




Այս ամենը անհրաժեշտ է հայաստանյան շուկայում մարզի մրցունակությունը բարձրացնելու և Լոռուում զբոսաշրջության ոլորտը զարգացնելու համար:

Պարզապես պետք է ճիշտ գնահատել Լոռու մարզի զբոսաշրջային ներուժը՝ ստեղծելով շուկայական հարաբերությունների բնույթին համապատասխանող նորարարական տուրփաթեթներ:


Ընդհանուր տնտեսական և սոցիալական համատեքստում Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտը ցածր հեղինակություն է վայելում: Ծառայությունների որակի բարձրացումը պահանջում է զբոսաշրջության ոլորտի մարդկային ռեսուրսների զարգացման ծրագրերի մշակում՝ ներառյալ զբաղվածության հնարավորությունների նոր քաղաքականության մշակում և վերապատրաստում, ինչը կապահովի ծառայությունների համաշխարհային շուկայում առկա պահանջարկին համահունչ աշխատողների բազա:

Այստեղ պետական կարգավորումը հիմնականում պետք է ուղղված լինի զբոսաշրջիկների անվտանգության ու առողջության, սանիտարահիգիենիկ նորմերի ու շրջակա միջավայրի, պատմամշակութային ժառանգության պահպանության, սպառողների իրավունքների պաշտպանության ապահովմանը:

*Գծապատկեր 12. Զբոսաշրջային արդյունակության կախվածությունը համայնքի բնակչից*



*Գծապատկեր 13. Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտում ներգրավված մարդկային ռեսուրսների զարգացման նախապայմանները*



Լոռու մարզում առկա ենթակառուցվածքներում մարդկային ռեսուրսները պատրաստ չեն բավարարելու ժամանակակից սպասարկման պահանջները:

Անհրաժեշտ է սկզբնական շրջանում զբոսաշրջային կենտրոններում համայնքների հետ համատեղ կատարել մարդկային ռեսուրսների կամավոր հիմունքներով հավաքագրում և իրականացնել կրթական ծրագրեր, ինչը նաև լուծում կտա կադրային ապահովման խնդրին:

Մարզում զբոսաշրջության ոլորտը այսօր գործարար միջավայրի աշխույժացման հիանալի միջոց կարելի է դիտարկել:

Լոռու մարզում զբոսաշրջությունը դեռևս չի ընկալվում որպես մարզի բազմաթիվ խնդիրների լուծման միջոց, քանի որ մարզի բնակչությունը մասնակից չէ զարգացման գործընթացներին:

Գծապատկեր 13-ի նախապայմանները մեկնարկելուց հետո մարզում հյուրընկալման ոլորտը կհամալրվի որակյալ կադրային ռեսուրսներով:

Զբոսաշրջիկների կողմից կատարվող բուն զբոսաշրջային ծախսերը Հայաստանում բնութագրվում են ցածր ցուցանիշներով: Որոշ չափով սա պայմանավորված է սահմանափակ ծառայություններով:

Զբոսաշրջային ծախսերը կարող են ավելանալ այլընտրանքային զբոսաշրջային արդյունքների ստեղծման և զարգացման, հյուրընկալման ոլորտում ծառայությունների որակի բարելավման և նորարարական պահանջարկ վայելող զբոսաշրջային գրավչությունների տրամադրման միջոցով:

Զբոսաշրջության ոլորտում ծավալվող գործարարության հիմնական հատվածը փոքր և միջին ձեռնարկություններ են: Եվ սահմանափակ կարողություններով ներդրողներին պետք է ցուցաբերվի խրախուսման, հնարավորությունների ու հուսալի տվյալների տրամադրման աջակցություն:

Ներդրումների ներկայիս մակարդակը ցածր է Լոռու մարզի այն գյուղական համայնքներում, որտեղ հնարավոր է զարգացնել զբոսաշրջության մի քանի տեսակներ, և եթե դիտարկվում է զբոսաշրջության ոլորտում Լոռու մարզի մրցունակ լինելու հնարավորությունները, ապա հանգում ենք նրան, որ պետք է ավելացնել ներդրումների չափերը:

Հետազոտության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունների հիման վրա հաշվարկվել է մեկ տարվա կտրվածքով մարզում զբոսաշրջային ծախսերի մոտավոր չափը: Այն ներկայացված է Աղյուսակ 14-ում:

*Աղյուսակ 14. Ջրոսաշրջային ծախսերը Լոռու մարզում  
Ջրոսաշրջիկ/օր հաշվարկով*

Հաշվարկի համար օգտագործվել են Աղյուսակ 9, 10 և 13-ում հավաքագրված տեղեկատվությունը

Ընդհանրացված հաշվարկներով զբոսաշրջային ծախսերը Լոռու մարզում				
	ճաշ	ճաշ, ընթրիք	1 օր Նախաճաշով	Տարեկան 30% ծանրաբեռնվ. 120 օր նախաճաշով
1 B&B-ի ննջատեղից գիշերակացից գանձվող գումար			€ 20	
1 հյուրանոցային ննջատեղից գանձվող գումար			€ 25	
250 B&B-ի ննջատեղ (տարեկան 30% ծանրաբեռնվ.)				€ 600.000
1050 հյուրանոցային ննջատեղ (տարեկան 30% ծանրաբեռնվ.)				€ 3.150.000
1 զբոսաշրջիկի համար	€ 6	€ 12		
1.300 ննջատեղի համար (տարեկան 30% ծանրաբեռնվ.)		€ 936.000		
<b>Հյուրանոցատիպ տնտեսությունների տարեկան 30% ծանրաբեռնվածության պարագայում մարզում զբոսաշրջիկները ծախսում են անհրաժեշտ սննդի և գիշերակացի համար € 4.686.000</b>				
<b>€ 960.000 + € 2.700.000 + € 936.000 = € 4.686.000</b>				

Հյուրանոցատիպ տնտեսությունների տարեկան 30% ծանրաբեռնվածության պարագայում մարզում անհրաժեշտ սննդի և գիշերակացի համար զբոսաշրջիկները տարեկան ծախսում են մոտ € 4.686.000, սակայն նրանք նաև գումարներ են ծախսում հուշանվերների, զովացուցիչ ըմպելիքների, հանրային տրանսպորտի և այլ անհրաժեշտությունների վրա, որոնք ներկայացված չեն այս հաշվարկի մեջ:

Այսպիսով, Լոռում ակտիվացնելով զբոսաշրջային գործունեությունը, մեծացնելով սեզոնայնությունը և ընդլայնելով զբոսաշրջային գրավչությունների տեսականին՝ այս տարածաշրջանում ավելի կմեծանան արտարժույթի հոսքերը:

## ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ

### ԿԱՅԱՑՄԱՆԸ ՄԻՏՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Զբոսաշրջության գործարարության մեջ առանցքային դեր ունեն տուր-օպերատորները և տուր-կազմակերպությունները: Հարկավոր է Լոռու մարզում ակտիվացնել գործարար ոլորտի զարկերակ համարվող այդ համակարգը:

Հայաստանյան տուրօպերատորների կողմից ձևավորվող տուրփաթեթներում հիմնականում Լոռին մեկօրյա երթուղով է ներկայացվաց: Աղյուսակ 13-ում նշվում է մարզում մի քանի օր տևողությամբ տարաբնույթ զբոսաշրջային երթուղիների առավելություններից մի քանիսը: Այդ հիմք ընդունելով՝ հարկավոր է ձևավորել ներմարզային տուրեր, որոնք մի քանի օր տևողությամբ կլինեն: Այդ թվում՝ նաև տարածաշրջանային տուրեր նախաձեռնել, ինչը հնարավորություն կընձեռնի մարզի ճանապարհների երկայնքով սպասարկման տարաբնույթ կառուցվածքների ստեղծմանը:

Մարզում զբոսաշրջային տների ցանցի ձևավորումն ու զարգացումը առաջնային խնդիր է: Հյուրատների համար որակավորման գործընթացկազմակերպելը և դա վերահսկելը կբարձրացնի նրանց կողմից մատուցվող ծառայությունների որակը:

Մարզի աշխարհագրական պայմանների առանձնահատկություններից ելնելով քեմիկինգային հյուրանոցների բազաների ստեղծումը կնպաստի տարաբնույթ զբոսաշրջային գործունեության ծավալմանը:

Մարզի կարևոր ենթակառուցվածքների՝ միջպետական նշանակության ավտոմայրուղիների, դեպի զբոսաշրջային գրավչության օբյեկտներ տանող ավտոճանապարհների, զբոսաշրջային երթուղիների, կաճանների երկայնքով սանիտարական պայմաններ ապահովող շինությունները բացակայում են և առանցքային խոչընդոտ են համարվում: Դրանց համալրումը կնպաստի մարզի դրական վարկանիշի բարձրացման վրա: Նաև ճանապարհների երկայնքով շատ սակավ են տեղադրված կոմունիկացիոն ցուցանակները, ինչը դժվարեցնում է հասանելիությունը դեպի այցելավայրեր:

Լոռու մարզը լուսաբանող գովազդատեղեկատվական ապահովման համակարգը շատ թերի է: Անհրաժեշտ է ստեղծել միջազգային հանրության համար Լոռու մարզի մասին զբոսաշրջային կայք, որտեղ արտացոլված կլինի մարզի ողջ զբոսաշրջային ներուժը: Պետք է կազմակերպել Լոռին ներկայացնող գովազդատեղեկատվական նյութերի մշակում, տպագրում և տարածում պոտենցյալ զբոսաշրջիկների և տուրօպերատորների շրջանակներում:

Մարզում ազգային և տեղական առանձնահատկությունները բացահայտող հուշանվերների մասնագիտացված խանութներ չկան: Իսկ զբոսաշրջիկի հոգեբանության առանցքային տարր է համարվում նոր այցելավայրից հիշարժան ինչ-որ բան ձեռք բերելը: Հարկավոր է խրախուսել այն անհատներին, ովքեր կարող են այցելավայրերին կից շուրջ տարին աշխատող հուշանվերների խանութներ բացել:


Մարզի տարածքում անհրաժեշտ է ավելացնել բարձրակարգ սննդի սպասարկման օբյեկտների քանակը, որոնց ճաշացանկում տեղական խոհանոցին կից պետք է նաև ներառել միջազգային խոհանոց: Մարզի հանրային սննդի հաստատությունների քանակը բավարար է, սակայն զբոսաշրջային այցելավայրերին կից սնունդ սպասարկող օբյեկտները

պետք է ունենան միջազգային չափանիշներին համապատասխանող ծառայությունների, անվտանգության և հիգիենայի պայմաններ:

Ցանկալի է որ բուժիչ խոտաբույսերով հարուստ այս վայրում ստեղծվի բրենդային թեյատուն, որտեղ կմատուցվի տեղական բուսատեսակներով պատրաստված թեյերի լայն ընտրանի, և այս հաստատությունը այցեքարտ կարող է հանդիսանալ մարզի համար:

Մարզում կազմակերպվող երթուղիների ճանապարհներին էկո-ոստորանների ստեղծումը զբոսաշրջիկների կողմից կարող է մեծ հետաքրքրություն առաջացնել Լոռու հանդեպ:

Վերջին շրջանում իրադարձային զբոսաշրջությունը մեծ ծավալում է գտել ամբողջ աշխարհում, իսկ Լոռին էլ իր ավանդական տոնակատարություններով համապատասխան գովազդատեղեկատվական գործունեություն ծավալելու դեպքում, կարող է այցելավայր հանդիսանալ զբոսաշրջության այդ ուղղությունը նախընտրողների համար: Նման միջոցառումները նպաստում են նաև ներքին զբոսաշրջության զարգացմանը, ինչպես նաև նոր զբոսաշրջային գրավչությունների բացահայտմանը, ձևավորմանը, զբոսաշրջային սեզոնի երկարաձգմանը և պատմամշակութային հիմքի վրա զբոսաշրջային ձևերի առաջընթացին:






**Չբուսաշրջության ոլորտի ազդեցությունը Լոռու մարզի զարգացման համար**

**կարող է ունենալ հետևյալ հետևանքները**

*Գծապատկեր 14. Չբուսաշրջության ոլորտի ազդեցության հետևանքները Լոռու մարզի զարգացման վրա*



Լոռու մարզի զարգացումը խթանող բարենպաստ միջավայր ստեղծելու համար զբոսաշրջության ոլորտը մեծ ներդրում կարող է ունենալ: Ինչը կնպաստի նոր աշխատատեղերի ստեղծմանը, զբոսաշրջության ոլորտի գործարար միջավայրի ակտիվացմանը, ներդրումային դաշտի ձևավորմանը, բնակչության կենսամակարդակի աճի ապահովմանը, մարզի մշակութային գործունեության ակտիվացմանը, մարզի տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը՝ կապված զբոսաշրջային ծառայությունների ստեղծման և մատուցման հետ:

Լոռու զբոսաշրջության ոլորտում հաջողության հասնելու համար պետք է ապահովել կատարյալ մասնագիտացվածություն, որի բաղկացուցիչ մասն է համարվում զբոսաշրջության գործունեության գիտակից կարգավորումը՝ ընդգրկելով ինչպես կառավարական կարգավորումը, այնպես էլ ինովացիոն տարրերով ոլորտը հագեցնելը: Ուսումնասիրության ընթացքում կատարված վերոնշյալ առաջարկները հնարավորություն կընձեռնեն միջազգային շուկայի պահանջներին համապատասխանող մարդկային ռեսուրսներով ապահովմանը և մարզում զբոսաշրջային բարենպաստ միջավայրի ստեղծմանը:

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

**Լոռու մարզում գործող թանգարանները**

Անվանումը	Համառոտ բնութագիր	Գտնվելու վայր
«Լոռի-Փամբակ» երկրագրտական թանգարան	Հիմնադրվել է 1938թ., հնագետ Եղիա Մուջյանի կողմից: Թանգարանում առկա է շուրջ 34 հազար նմուշ: Նմուշները թվագրվում են Ք.ա. 4-րդ հազարամյակից մինչ մեր օրերը: Թանգարանում գործում է հնագիտական, ազգագրական և նորագույն պատմության բաժիններ:	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 1
Կերպարվեստի թանգարան	Ստեղծվել է 1974թ., որպես ազգային պատկերասրահի մասնաճյուղ: 1979 թվականից ինքնուրույն կարգավիճակ ստանալով՝ անցել է քաղաքային ենթակայության: Թանգարանում առկա է շուրջ 1700 աշխատանքներ:	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 52
Ստ.Զորյանի տուն-թանգարան	1962-1964թթ. կառուցված առանձնատունը 1983թ. ՀՍՍՀ Մշակույթի նախարարության կողմից հաստատվեց որպես տուն-թանգարան: Այն ունի 7 սրահ, որից 2-ը որպես աշխատասենյակ, մեկը՝ ննջարան: Տուն-թանգարանում առկա է շուրջ 2000 միավոր ֆոնդային ցուցանմուշներ:	ք. Վանաձոր, Զորյանի 24
Միկոյան եղբայրների տուն-թանգարան	Հիմնադրվել է 1982թ.: Տուն-թանգարանում արտացոլվում են Միկոյան եղբայրների աշխատանքների գործունեությունը: Առկա է հայրական տան ցուցանմուշներ, լուսանկարներ:	ք. Ալավերդի, Սանահին Սարահարթ
ՀՀ Ազգային պատկերասրահի Ալավերդու մասնաճյուղ	Ստեղծվել է 1987թ., որի հիմնական ցուցադրությունը կազմված է հայ նշանավոր նկարիչների՝ Հ.Կոջոյան, Փ.Թերլեմեզյան, Գ.Խանջյան, Հ. Կալենց և այլոց կտավներից: Թանգարանում պարբերաբար անցկացվում են մշակութային միջոցառումներ:	ք. Ալավերդի
Հ.Թումանյանի տուն-թանգարան	Ստեղծվել է 1939թ.: 1994 թվականին Թումանյանի սիրտը թաղվեց թանգարանի բակում: Պահպանվում են հայրական տան իրերը, անձնական իրերը, կյանքին ու գործունեությանը վերաբերող փաստաթղթեր:	գ. Դսեղ
Երկրագիտական թանգարան	Հիմնադրվել է 2007թ.: Ցուցանմուշները դասակարգված են հնագիտական, ազգագրության և նորագույն պատմության բաժիններով: Թանգարանում առկա է շուրջ 1000 ցուցանմուշ: Թանգարանը համագործակցում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Լոռու մարզի հուշարձանների պահպանության կոմիտեի հետ:	գ. Մարգահովիտ
Ստ.Շահումյանի տուն-թանգարան	1934թ. Ստեփանավանի շրջխորհրդի գործկոմի որոշմամբ Ս.Շահումյանի աներոջ տունը վերածվել է որպես Ս.Շահումյանի տուն-թանգարան: 1991թ. ՀՀ կառավարության որոշմամբ այն վերանորոգվեց որպես մշակույթի և ժամանցի կենտրոն՝ իր մեջ ներառելով նաև թանգարանային բաժինը: Ցուցադրության է ներկայացված 58ւ, իսկ ֆոնդերում առկա է 1515 ցուցանմուշ:	ք. Ստեփանավան Նժդեհի 4
Լոռվա կենցաղի և մշակույթի թանգարան	ՀԱՊԹ-ի Կոչրթանի մասնաճյուղը բացվել է 1989թ.: 1997 թվականից անցել է համայնքային ենթակայության տակ: Առկա է 105 հնագիտական, 359 ազգագրական ցուցանմուշ և Լոռու ազգագրական կահավորված սենյակ:	գ. Կուրթան
«Սպիտակի թանգարան» ՊՈԱԿ	Թանգարանը ստեղծվել է 1980թ.: Վերաբացվել է 2006թ.: Թանգարանը գործում է մշակույթի պալատի ներքինահարկում: Առկա է շուրջ 2155 հնագիտական և ազգագրական ցուցանմուշ, որոնց թվում նաև կերպարվեստի գործեր:	ք. Սպիտակ, Ա.Ավետիսյան 1

Լոռու մարզի կամուրջները

Հուշարձան	Կառուցված	Գտնվելու վայր	Քաղաք / գյուղ	հավելյալ նշումներ
Կամուրջ «Հովսեփանց»	18-րդ դ.	Շահումյանի հրապարակում	Վանաձոր	Վանաձոր գետի վրա
Կամուրջ (Սանահնի կամուրջ)	1195 թ.	քաղաքի կենտրոնում, Սանահին տանող հին ճանապարհին, Դեբեդ գետի վրա	Ալավերդի	միաթռիչք, պատերի վրա առյուծների հարթաքանդակներ, կառուցել է Վանենի թագուհին
Կամուրջ	1927 թ.	քաղաքից 1 կմ հս, Օլան-Լոռե գետի վրա, Աչաջուր տեղանքում	Ստեփանավան	
Կամուրջ		Տաշիրի ձորում	Տաշիր	Ավերված
Կամուրջ	12-13-րդ դդ.	գյուղից հս-սե, Ձորագետի վրա	Ագարակ	վերականգ. 19 դ.
Կամուրջ	1893 թ.	Ագարակի ձորում, Ձորագետի վրա		Արձանագիր
Կամուրջ	13 դ.	Մարցաջուր գետակի վրա	Դսեղ	պահպանվել է ձախակողմյան խելը
Կամուրջ Երկաթուղու	19 դ.	Փամբակ գետի վրա	Եղեգնուտ	Քառաթռիչք
Կամուրջ	17 դ.	գյուղի ամ մասում, Մանասե գետակի վրա	Թեղուտ	Միաթռիչք
Կամուրջ	11-12-րդ դդ.	Միսխանա գետի վրա	Լոռի բերդ	Ավերված
Կամուրջ	11-12-րդ դդ.	Ձորագետի և Միսխանա գետերի միացման մասում		
Կամուրջ	միջնադար	Լորուտ գետի վրա	Լորուտ	
Կամուրջ	միջնադար	Լորուտ գետի վրա		
Կամուրջ	12-13-րդ դդ.	գյուղի ամ եզրում, Տուտկաջուր վտակի վրա	Կողես	
Կամուրջ	12-13-րդ դդ.	Ձորագետի վրա	Կուրթան	ավերված, պահպանվում են հետքերը
Կամուրջ	13 դ.	Շերեք գետակի վրա, Ջրաղացաձորում	Հաղպատ	
Կամուրջ	12-13-րդ դդ.	Քարինջ-Մարց գյուղերի միջև, Քարինջ գյուղից 1 կմ հեռու, ճանապարհի աջ կողմում, Մարցաջուր գետի վրա	Մարց	պահպանվել են խելերը
Կամուրջ	15-17-րդ դդ.	Իգատակ գյուղատեղիից 1 կմ հվ, Մարցաջուր գետի վրա		Ավերված
Կամուրջ Մոսկոբի	12-13-րդ դդ.	Մարցաջուր գետի վրա, գյուղից 3 կմ հեռու Լորուտի ճանապարհին		Ավերված
Կամուրջ	13 դ.	գյուղի հս-սե եզրին, Յաղդան-Կողես ճանապարհի աջ կողմում, Յաղդանջուր վտակի վրա	Յաղդան	
Կամուրջ	17-18-րդ դդ.	գլխավոր մայրուղուց Քարինջ թեքվող ճանապարհից աջ, Մարց գետի վրա	Քարինջ	ավերված, պահպանվել են խելերը

**Լոռու մարզի աղբյուրները և հուշաղբյուրները**

Հուշաղբյուրները և աղբյուրները բավականին մեծ հետաքրքրություն են ներկայացնում զբոսաշրջային գործունեության մեջ, հարկ ենք համարել ներկայացնել նաև Լոռու մարզի այդ հիշարժան կոթողները:

Հուշարձան	Կառուցված	Գտնվելու վայր	Քաղաք / գյուղ	հավելյալ նշումներ
Հուշաղբյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1951 թ.	2 մասնաշենքի պատի տակ	Վանաձոր	տեղափոխվել է Վանաձոր գետի վերին հոսանքից, քանդակագործ Մեհրաբ
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1960-ական թթ.	Տարոն 4 թաղամասում		նախկին Ղշլաղ գյուղի կենտրոնում
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1953 թ.	Խնձորուտ թաղամաս, Վանաձոր-Դիլիջան ճանապարհի ձախ եզրին		քանդակագործ Մեհրաբ
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1955 թ.	քաղաքի կենտրոնական Գերեզմանոցում		քանդակագործ Մեհրաբ
Աղբյուր	1255 թ.	Սանահին վանքից ամ, թաղամասի եզրին	Ալավերդի	վերականգնվել է 1951-1952 թթ.
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	քաղաքի մեջ		ճարտ.՝ Ռ. Իսրայելյան
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1961 թ.	Սանահին թաղամասում, դպրոցից 100 մ հս-ամ		ճարտ.՝ Ռ. Հակոբյան
Աղբյուր	1831 թ.	վանքի բակում, հս պարսպապատի մեջ		կառուցել է վանքի առաջնորդ Հ. Տեր-Բարսեղյանցը
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1972 թ.	քաղաքի կենտրոնում	Շամլուղ	
Աղբյուր	1950 թ.	գյուղի կենտրոնում	Ագարակ	
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	գյուղի կենտրոնում	Անտառամուտ	
Աղբյուր «Օձի պորտ»		համալիրից 100 մ հս-ամ	Արդվի	ըստ ավանդության ունի հիվանդություններ բուժելու հատկություն
Հուշաղբյուր «Ալ. Պուշկինի հանդիպումը Ալ. Գրիբոյեդովի դիակառքին»	1930- ական թթ.	գյուղից 1.5 կմ հվ, Գարգառ-Վանաձոր ճանապարհին	Գարգառ	ճարտ.՝ Մ. Մազմանյան, քանդ.՝ Ա. Սարգսյան
Հուշաղբյուր՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին («Ժամի աղբյուր»)	1949 թ.	գյուղի մեջ	Գյուլագարակ	

Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1947 թ.	գյուղի կենտրոնում	Դսեղ	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1968 թ.	գյուղի մեջ		
Աղբյուր նավաքարով	13-15-րդ դդ.	եկեղեցուց ամ		
Հուշադրյուր	1908 թ.	գյուղի մեջ	Լեջան	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	գյուղի մեջ	Ծաթեր	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1967 թ.	գյուղի մեջ	Կաթնաջուր	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1950-60 ական թթ.	գյուղի մեջ, ձոր տանող ճանապարհի ձախ եզրին	Կուրթան	
Հուշադրյուր	1972 թ.		Հագվի 7.58/9	
Հուշադրյուր	20 դ. սկիզբ	գյուղի հվ-ամ մասում		
Հուշադրյուր Գնդապետ Հ. Օհանյանին	1975 թ.	Գյուղում		Է. Օհանյանի տան մոտ
Աղբյուր	13 դ.		Հաղպատ	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1960 թ.	Ալավերդի-Ախթալա ճանապարհի ձախ կողմում		
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1963 թ.	գյուղի կենտրոնում		
Աղբյուր	1258 թ.	շրջապարսպից 100 մ աե		Կառուց. է վանքի առաջնորդ Հովհաննեսը: Վերակառ. է 1827 թ.
Աղբյուր	19 դ.	գյուղի կենտրոնում	Հովնանաձոր	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին		գյուղի խնայորամարկղի մոտ	Ճոճկան	
Հուշադրյուր	1981 թ.	գյուղի կենտրոնում	Մարց	
Աղբյուր			Մղարթ	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1961 թ.	գյուղի մեջ	Շնող	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1949 թ.	գյուղի մեջ	Սարահարթ	
Հուշադրյուր	1966 թ.	գյուղի կենտրոնում	Վարդաբլուր	
Հուշադրյուր	1960 թ.	գյուղի մեջ	Օձուն	
Հուշադրյուր Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1946 թ.	գյուղի կենտրոնում	Ամոջ	

**Լոռու մարզի առավել դիտարժան  
պատմամշակութային հուշարձանները**

Լոռու մարզում պատմամշակութային հուշարձանների մի հաստիված ներկայացված է այս հավելվածում:<sup>5</sup> ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանները Լոռու մարզում ներառում են շուրջ 3045 հուշարձան:

Լոռու մարզի ստորև հիշատակված հուշարձանները հիմնականում հանրապետական նշանակության են և կարող են ընդգրկվել ՀՀ զբոսաշրջային ռազմավարական նշանակություն ունեցող երթուղիներում:

Մարզի հուշարձանները թվագրվում են Ք.ա. 5 հազ. տարուց մինչև մեր օրերի նորակառույցները:

Մարզի տարածքում են գտնվում համաշխարհային մշակութային ժառանգության օբյեկտների ցանկում (ՅՈՒՆԵՍԿՕ) ընդգրկված երկու հուշարձան՝ Հաղպատի ու Սանահինի հրաշակերտ վանական համալիրները:

Հուշարձան	Կառուցված	Քաղաք / գյուղ	Գտնվելու վայր	հավելյալ նշումներ
Ամառանոց Թախրովի	19 -րդ դ.	Վանաձոր	Զաքարյան փող. 31	Մեծահարուստ Թախրովի ամառանոցն է եղել, այժմ Գուգարաց թեմի առաջնորդարանն է: Շրջակ.կան տարբեր տեղերից բերված կոթողային հուշարձաններ
Բերդշեն թագավորանիստ	Ք.ա. 4-1 հազ., հելեն. շրջ., միջնադ.		Տանձուտ և Փամբակ գետերի միախառնման վայրում	համանուն բլրի վրա
Եկեղեցական համալիր Սբ. Աստվածածին	13-14 դդ., 1831 թ.		Փամբակ և Տանձուտ գետերի միախառնման վայրում, բլրի վրա	
Եկեղեցի	1895 թ.	Վանաձոր	կայարանամերձ հրապարակից ամ, երկաթուղայինների զբոսայգում	խաչաձև հատակագծով կենտրոնագմբեթ ռուսական Եկեղեցի
հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին	1969 թ.		Հաղթանակի փողոց, անտառափեշի թեքության վրա	խորաքանդակներով զարդարված երկու հենապատեր՝ կենտրոնում հուշասյուն, հավերժական կրակով
հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածներին քիմիագործներին	1969 թ.		Քիմիագործների զբոսայգում	բազալտե պատվանդանի վրա գինվորի կիսանդրի
Ամրոց «Կոշաբերդ»	10-13-րդ դդ.	Ալավերդի	Սանահին թաղամասից 5 կմ հվ	
Խճանկար Հ.Թումանյանի	20-րդ դ.		քաղաքի մեջ	հեղ.՝ Հ. Ռուխկյան
Վանական Համալիր	10-13-րդ դդ.		Սանահին թաղամասի կենտր. բարձրադիր մասում	

<sup>5</sup> Տեղեկատվության համար հիմք է ընդունվել «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին ՀՀ կառավարության» 04.12.1995թ. օրենքով սահմանված բնակավայրերի կառուցվածքը և համարակալումը հաստատող նորմատիվա-օրենսդրական փաստաթուղթը:

Մանահին				
Դամբարան-մատուռ-տապանատուն Ջաքարյան իշխ.	12-13-րդ դդ.		շրջապարսպից դուրս՝ գերեզմանոցից ամ, Սբ. Հակոբ եկեղեցու մոտ	այստեղ թաղված են Վահրամ, Մարգիս Մեճ և Ջաքարե Ջաքարյանները
Ամրոց	13-րդ դ.	Ախթալա	Ախթալա կայարանի հս մասում, Դեբեդ և Ախթալա ձորերի միացման անկյունում	ավերված, ժայռոտ բլրի գագաթին
Դամբարանադատ	Ք.ա. 2-1 հազ.		քաղաքի մեջ	պեղել է Ժակ դը Մորգանը
Ամրոց Ախթալա, Վանական համալիր (Պղնձահանք, Միսխանա)	10-13-րդ դդ.		ցյուղի մեջ, հրվանդանի վրա	
Վանական համալիր Սբ. Երրորդութ.	13-րդ դ.		ցյուղի կենտր. մասում, Ախթալայի վանքից 0.5 կմ հս-աե	
Հուշարձան Հ.Թումանյանի	1986 թ.	Թումանյան	քաղաքի մեջ	
Վանական Համալիր Քոբայր	12-13-րդ դդ.	Քոբայր կայարանի գ.	կայարանից հվ-ամ, Դեբեդի կիրճի բարձրադիր դարավանդների վրա	
Եկեղեցի «Չիթախանց վանք» (Չիթխավանք)	13-րդ դ.		վանքից մոտ 0.5 կմ հվ-աե, ձորավանջի հարթակի վրա	միանավ դահլիճ, կրկնահարկ Դամբարան-Եկեղեցի
Ամրոց «Ավանաքար»	14-15-րդ դդ.		Քոբեր կայարանից 5 կմ հվ	հնագիտական գտածոները պահվում են Թումանյան քաղաքի թանգարանում
Քարայր-Կացարանների համալիր	12-17-րդ դդ.		Քոբերի վանքի մոտ, ձորի բարձրադիր քարափներում	Քարայրներից մի քանիսը վերածվել են մատուռների և ճգնավորների կացարանների
Եկեղեցի	2001 թ.	Սպիտակ	քաղաքի մեջ	
Ամրոց	Ք.ա. 2-1 հազ.	Ստեփանավան	Արմանիս-Կաթնաղբյուր ճանապարհին	բլրակի վրա, ավերված
Եկեղեցի «Օրան-Լոռե»	12-13-րդ դդ.		քաղաքից ամ	հարթության վրա, երևում են միայն հիմնապատերը
Եկեղեցի Սբ. Մարգիս	19 դ.		քաղաքի մեջ	
Եկեղեցի «Ճգնավոր»	12-13-րդ դդ.	Ագարակ	ցյուղից աե, ջրամբարից քիչ վեր, ժայռի մեջ	որպես ծածկ ծառայում է բնական ժայռը
Եկեղեցի	1910-1914 թթ.	Ամրակից	ցյուղից մեջ, դպրոցի մոտ	Ռուսական
Վանական համալիր Սբ. Հովհաննես (Սրբանես, Հովհան Օձնեցու վանք)	8-19-րդ դդ., վերակառ. 17 դ., 1902 թ.	Արդվի	ցյուղից 1 կմ հս, լեռան լանջին	Լորիս-Մելիքյանների և Մելիք-Քալանթարյանների տոհմական գերեզմանոցը
Պորտաքար		Արդվի	«Օձի պորտ» աղբյուրի մոտ	չբեր կանանց հրաշագործ հղիություն պարզևող քար
Սրբատեղի «Օխտը մոնթի»			համալիրի ստորին մասում, «Օձի պորտ» աղբյուրի մոտ	Ըստ ավանդության այստեղ օձի խայթից մահացել են Հովհաննես Գ Օձնեցու 7 աշակերտները
Եկեղեցի «Տորակ»	5-6-րդ դդ.	Գյուլագարակ	Գյուլատեղիում	ավերված, միանավ սրահ, շրջափակված է եղել պարսպով
Եկեղեցի	12-13-րդ դդ.	Դեբեդ	ցյուղատեղիի հս-ամ եզրին, բլրի գագաթին	Ավերված
Եկեղեցի Սբ. Գր. Լուսավորիչ	վաղ միջնադար	Դսեդ	ցյուղի կենտրոնում, Հ. Թումանյանի տուն-թանգարանի մոտ	վերակառ.՝ 13 դ. և 1900 թ, շրջապատված է քարե ցանկապատով
Միրուն Խաչ	13-րդ դ.		Գյուղի հս-աե, Մարց գետի ձախ ափին	
Վանական համալիր Քառսնից Մանկանց վանք	11-15-րդ դդ.		ցյուղի հս-ամ մասում, Դեբեդի կիրճի աջակողմյան լանջին, «Տախտեր» վայրում	



Վանական համալիր Մանստև	13 դ.	Թեղուտ	ցյուղից 3 կմ հս-աե, Մանստև գետակի աջ ափին	Անտառում
Հուշակոթող Մեծ եղեռնի զոհերին	1977 թ.	Լեռնապատ	բլրի վրա	Ղարաքիլիսայի ճակատամարտի վայրում
Սրբատեղի	Միջնադար		ցյուղից 7 կմ հվ. «Քիլիսա» ցյուղատեղի տանող ճանապարհի ձախ կողմում	Ժայռի վրա պատկերված են պարզ խաչեր
Քաղաքատեղի Լոռի Բերդ	11-18-րդ դդ.	Լոռի Բերդ	ցյուղից 2 կմ աե, Ձորագետ և Միսխանա գետերի միախառնման վայրում	հրվանդանի վրա
Ամրոց «Ծտաբերդ»	Ք.ա. 3-1 հազ.	Կուրթան	ցյուղից հվ-ամ, Գյառգյառ գետի ձախ ափին	
Վանական համալիր Հնեվանք	7-12-րդ դդ.		ցյուղից 4 կմ հվ-աե, Կուրթանի ձորում	լեզվակաձև հրվանդանի վրա
Ամրոց «Կայանբերդ»	1233 թ.	Հաղպատ	ցյուղի հվ-ամ մասում, հրվանդանի վրա	կառուցել է Հաղպատի վանահայր Հովհաննեսը
Դսեվանք (Դրսեվանք, Սբ. Աստվածածին)	1233 թ.		ամրոցի հվ-աե մասում, ժայռի գլխին	կառուցել է Հաղպատի վանահայր Հովհաննեսը
Վանական Համալիր Հաղպատ	10-20-րդ դդ.		ցյուղի հվ-աե եզրին	
Քարանձավ	Ք.ա. 5-1 հազ.	Պաղարբյուր	ցյուղից 7 կմ հվ-ամ	ներսում բխում է աղբյուր
Ժայռապատկերներ	Ք.ա. 5-1 հազ.		քարանձավի ներսում, պատերի վրա	հիմնականում կենդանիների փորագիծ պատկերներ են
Ամրոց «Սիսի բերդ»	ուշ միջնադար	Վահագնաձոր	Լոռի հանգստյան տնից 7 կմ հվ-աե, բարձր քառաժայռի կատարին	
Եկեղեցի Սբ. Սարգիս	1071 թ.	Վարդաբլուր	Սբ. Սարգիս սարի գագաթի կենտրոնական մասում	
Եկեղեցի (Օձունի տաճար, Սբ. Հովհաննես եկեղեցի, Խաչգունդ վանք)	6 դ.	Օձուն	ցյուղի մեջ	գմբեթավոր, եռանավ սրահ, 19 դ. վերջին տանիքի աե մասում ավելացվել են զույգ զանգաշտարակներ
Եկեղեցի Ծիրանավոր - Ծաղկավանք	5 դ.		ցյուղի աե մասում, Դեբեդի ձորեզրին	միանավ սրահ, պահպանվել են հս և աե պատերը
Վանական Համալիր Հոռոմայրի Սբ. Նշան՝ ստորին հուշարձանախումբ	10-13-րդ դդ.		ցյուղից 1.5 կմ հվ-աե, Օձուն-Այգեհատ ճանապարհից ոչ հեռու, Դեբեդի ձախափնյա ձորալանջին	ավանդությունը վանքի հիմնադրումը վերագրում է հույն Վասիլ իշխանին (8 դ.)

## Լոռու մարզի ուխտավայրերը

Գուգարաց թեմի հոգևոր առաջնորդների կողմից հիմնականում ներքոնշյալ եկեղեցիներում են կատարվում ծիսակատարություններ (նշված ամիսներին):

### Հունվար – Փետրվար

Մբ. Փրկիչ եկեղեցի\_գ. Ծաղկաբեր, Մեծ Պարնի, Շենավան, Գարգառ

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ\_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Մեծ Պարնի, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Սարգիս եկեղեցի\_ք. Շամլուղ, Ստեփանավան, Վանաձոր, Տաշիր, գ. Գուգարք, Լեռնապատ, Լորուտ, Շնող, Քարինջ, Գեղասար, Մեծ Պարնի, Վարդաբլուր, Սվերդլով, Լեռնահովիտ

Մբ. Նահատակի բանք\_գ. Ճոճկան

Մբ. Սահակ մատուռ\_գ. Արևաշող

### Մարտ – Ապրիլ

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ\_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Մեծ Պարնի կամ Հարթազյուղ, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Հարություն եկեղեցի\_ք. Սպիտակ

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի\_գ. Մարգահովիտ, Դսեղի Բարձրաքաշ Մբ. Գրիգոր վանք, Հաղպատ. Արևաշող (մատուռ), Մեծ Պարնի, Լեռնապատ

Մբ. Հովհաննես Օձնեցի վանք\_գ. Արդվի

Քառասնից մանկանց վանք\_գ. Դսեղ

Մբ. Աստվածածին եկեղեցի\_ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորազյուղ, Ծաթեր, Հազվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

### Մայիս – Հունիս

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ\_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Մեծ Պարնի կամ Հարթազյուղ, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի\_գ. Մարգահովիտ, Դսեղի Բարձրաքաշ Մբ. Գրիգոր վանք, Հաղպատ. Արևաշող (մատուռ),

Մբ. Գայանե եկեղեցի\_գ. Նեղոց

Մբ. Երրորդություն եկեղեցի\_ք. Աղթալա, Շամլուղ

Մբ. Նշան եկեղեցի\_ք. Ստեփանավան, գ. Ծաղկաշատ, Լեռնապատ, Գարգառ, Շենավան, Վարդաբլուր

### Հուլիս – Օգոստոս

Մբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի\_գ. Մարգահովիտ, Դսեղի Բարձրաքաշ Մբ. Գրիգոր վանք, Հաղպատ. Արևաշող (մատուռ), Մեծ Պարնի, Լեռնապատ

Մբ. Աստվածածին եկեղեցի\_ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորազյուղ, Ծաթեր, Հազվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Մբ. Երրորդություն եկեղեցի\_ք. Աղթալա, Շամլուղ

Քոբայրավանք\_Քոբեր կայարան

### Սեպտեմբեր – Հոկտեմբեր

Մբ. Հովհաննես – Կարապետ եկեղեցի կամ մատուռ\_ք. Ալավերդի, գ. Ազնվաձոր, Լեռնանցք, Կաթնաջուր, Գարգառ

Մբ. Աստվածածին եկեղեցի\_ ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորագյուղ, Ծաթեր, Հազվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Մբ. Նշան եկեղեցի\_ք. Ստեփանավան, գ. Ծաղկաշատ, Լեռնապատ, Գարգառ, Շենավան, Վարդաբլուր

Մբ. Գրիգոր Նարեկացի եկեղեցի\_ք. Վանաձոր, Ալավերդի, գ. Հարթագյուղ

Մբ. Գևորգ եկեղեցի\_ք. Ախթալա, գ. Աքորի, Ղուրսալի, Սարալանջ, Մեծավան  
Գողգոթավանք\_ք. Թումանյան

**Նոյեմբեր – Դեկտեմբեր**

Մբ. Աստվածածին եկեղեցի\_ ք. Ալավերդի՝ Սանահնի վանք, Վանաձոր, գ. Ձորագյուղ, Ծաթեր, Հազվի, Հաղպատի վանք, Դսեվանք, Ճոճկան, Շնող, Օձուն, Ամոջ, Լեռնավան, Սարահարթ, Արևաշող, Ջիլիգա, Կուրթան, Չկալով, Սվերդլով, Վարդաբլուր

Քոբայրավանք\_Քոբեր կայարան

Մբ. Գաբրիել-Միքայել եկեղեցի\_ գ. Լեռնապատ

Մեծ Պապ (Մբ. Նիկողայոս) \_ գ. Մարց

Մբ. Հակոբ եկեղեցի\_ գ. Ամոջ, Շահումյան

Մբ. Ստեփանոս եկեղեցի\_ գ. Լեռնահովիտ

*Հավելված 6*

**Լոռու մարզում գործող բանկերի մասնաճյուղերը**

Գտնվելու վայրը	Արդշիննվեստ բանկ ՓԲԸ	Յունիբանկ ՓԲԸ	Հայկեյնոմբանկ ԲԲԸ	“ԱԳԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկ” ՓԲԸ	Կոնվերս բանկ ՓԲԸ	Ինելիբանկ ՓԲԸ	Առեքսիբանկ ՓԲԸ	“Բիբլոս բանկ Հայաստան” ՓԲԸ	“ՎՏԲ-Հայաստան բանկ” ՓԲԸ	“Հայբիզնեսբանկ” ՓԲԸ	“Պրովերբիտբանկ” ՓԲԸ	“Անելիք բանկ” ՓԲԸ	“Արարատբանկ” ԲԲԸ	“Ամերիկաբանկ” ՓԲԸ	“Զարգացման Հայկական բանկ” ԲԲԸ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
ք. Վանաձոր	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+	+
ք. Ալավերդի	+	+	+	+					+						
ք. Սպիտակ	+		+	+					+						
ք. Ստեփանավան	+			+					+						
ք. Տաշիր	+	+		+					+						

Ճանապարհորդության ընթացքում զբոսաշրջիկների մոտ տարադրամի փոխանակման բազմաթիվ խնդիրներ են առաջանում, և նրանք նախընտրում են բանկերում կատարել իրենց փոխանակումները:

Ստորև ներկայացված են Լոռու մարզում գործող բանկային մասնաճյուղերը:

Լոռու մարզում բանկային մասնաճյուղեր առկա են միայն մարզի հինգ քաղաքում: ՀՀ-ում գործող բանկերից 15-ը մարզում հիմնել են բանկային մասնաճյուղեր, որոնց ընդհանուր թիվը կազմում է 35 մասնաճյուղ, դրանք գտնվում են հետևյալ քաղաքներում.

ք. Վանաձոր – 19 ք. Ալավերդի – 5 ք. Սպիտակ – 4 ք. Ստեփանավան – 3 ք. Տաշիր – 4

**Լոռու մարզի պետական արգելավայրերը<sup>6</sup>**

Անվանումը	Ստեղծման թվականը	Տարածքը	Բարձր. ծովի մակարդակից	Ստեղծման նպատակը, պահպանության օբյեկտները
«Գյուլագարակի» արգելավայր	1958թ.	2576 հա	1400 – 1900 մ	Մոճու դարավոր անտառների (կան 130-150 տարեկան ծառեր), արժեքավոր ծառատեսակներ և հազվագյուտ անտառային խոտաբույսերի պահպանություն
«Մարգահովիտի» արգելավայր	1971թ.	2814 հա	1900 – 2200 մ	Անտառային կենդանիների պահպանություն
«Կովկասյան մրտավարդի» արգելավայր	1959թ.	761 հա	1900 – 2200 մ	Կովկասյան մրտավարդենու պահպանություն

**Լոռու մարզի դենդրոպարկերը և բուսաբանական այգին**

1. Վանաձորի բուսաբանական այգի
2. Ստեփանավանի դենդրոպարկ «Մոճուտ»
3. Վանաձորի դենդրոպարկ «Վանաձոր»
4. Ախթալայի դենդրոպարկ

Հավելվածներ 7, 8 և 9-ի մեջ նշված են այն տեղանքները, որոնք կարող են հետաքրքրություն առաջացնել էկոտուրեր նախընտրող զբոսաշրջիկների մոտ:

Լոռին ունի բոլոր հնարավորությունները էկոզբոսաշրջության զարգացման համար: Զբոսաշրջության այս տեսակի ռեսուրսները ներառում են.

- Արգելավայրերը, արգելոցները
- Դենդրոլոգիական պարկերը, բուսաբանական այգիները
- Բուժիչ-վերականգնողական վայրերն ու առողջարանները
- Երկրաբանական հուշարձանները
- Բնական հուշարձանները և այլն:

<sup>6</sup> Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքները և անտառները, WWF – Հայաստան, 2012թ., 52 էջ, ISBN 978-99941-2-701-6

**Լոռու մարզի առավել ուշագրավ  
բնական հուշարձանները**

- Լոռու ձոր – Դեբեդի կիրճում
- «Բոլոր քար» – Վանաձորում
- «Մայրի ձոր» – Ստեփանավանում
- Մայրի քարափ» – Դսեղ գյուղի մոտ
- «Տզրուկի ջրվեժ» – Աթան գյուղի մոտ
- «Ալմաստի լիճ» – Ագարակ գյուղի մոտ
- Թռչկանի ջրվեժ – Չիչկան գետի մոտ
- Դսեղի լճերը
- Գայլաձորի կիրճը
- Չորագետի, Փամբակի, Վանաձորի հովիտները և այլն

Թռչկանի ջրվեժը



**Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտի համար դիտարժան  
արդյունաբերական գործարանները**

Անվանումը	Գտնվելու վայրը	Ուղղվածությունը	Հակիրճ նկարագրություն
Ալավերու պղնձաձուլական գործարան	Ք. Ալավերդի	Պղինձ, մոլիբդեն	Լոռու մարզի Ալավերդի քաղաքում տեղակայված պղնձաձուլական գործարանն ու պղնձի հանքն ունեն շուրջ 240 տարվա պատմություն: Ներկայումս գործարանն աշխատում է որ ամբողջ հզորությամբ:
Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ	Ք. Ախթալա	Պղինձ, մոլիբդեն	Ախթալայի լեռնահարստացման կոմբինատն ունի 251-ամյա պատմություն:
Թեղուտի հանքավայր	Գ. Թեղուտ, գ. Շնող և հարակից տարածքներ	Պղինձ	Շահագործումը նախատեսված է մայիսին:
Վանաձորի քիմիական գործարան	Ք. Վանաձոր	Ամոնիակ, ազոտական թթու, կարբիդ, սինթետիկ կորունդ և այլն	Հիմնադրվել է 1933 թվականին, Ալավերդու կարբիդի արտադրության բազայի վրա: Ներկայումս գործարանն աշխատում է ոչ ամբողջ հզորությամբ:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

- Աղյուսակ 1. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 2009 – 2012թթ.-ի ծառայությունների ծավալները
- Աղյուսակ 2. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալների համեմատություն
- Աղյուսակ 3. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի կացության և հանրային սննդի կազմակերպման ծավալների համեմատություն
- Աղյուսակ 4. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի տեղեկատվության և կապի ծավալների համեմատություն
- Աղյուսակ 5. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի Տրանսպորտի ծառայությունների ծավալների համեմատություն
- Աղյուսակ 6. Լոռու և Շիրակի մարզերում 2009 – 2012թթ.-ի Սպասարկման այլ ծառայությունների ծավալների համեմատություն
- Աղյուսակ 7. Լոռու և Շիրակի մարզերում 2011թ. թանգարանների այցելուների թվաքանակը
- Աղյուսակ 8. Մարզային և համայնքային ենթակայությամբ գործող մշակութային կազմակերպությունների բաշխվածությունն ըստ Լոռու և Շիրակի մարզերի
- Աղյուսակ 9. Լոռու մարզի հյուրանոցային և առողջարանային ներուժը (ոչ պաշտոնական պայմանական գնահատում)
- Աղյուսակ 10. Լոռու մարզի հյուրատների, B&B-ների ներուժը
- Աղյուսակ 11. Լոռու մարզի տոնակատարությունները
- Աղյուսակ 12. Լոռու մարզի ագրոտուրիզմի զարգացմանը միտված արարողություններ
- Աղյուսակ 13. Նմանատիպ տուրերի համեմատական աղյուսակ. (ՀՀ-ի համար - 3 օրը ապահովելու են մարզային հյուրանոցում)
- Աղյուսակ 14. Զբոսաշրջային ծախսերը Լոռու մարզում Զբոսաշրջիկ/օր հաշվարկով

ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐԻ ՑԱՆԿ

- Գծապատկեր 1. Զբոսաշրջության և երիտասարդների ձեռներեցության զարգացման ծրագրի հիմնական նպատակները
- Գծապատկեր 2. Լոռուում զբոսաշրջային գործարարության ակտիվացմանը խոչընդոտող հանգամանքներ
- Գծապատկեր 3. Լոռու, Շիրակի և Տավուշի մարզերի 2009 – 2012թթ.-ի ծառայությունների ծավալների համեմատություն
- Գծապատկեր 4. ՀՀ տուրօպերատորների նախընտրելի զբոսաշրջության տեսակները Լոռու մարզում
- Գծապատկեր 5. Զբոսաշրջության հեռանկարային տեսակները Լոռու մարզում
- Գծապատկեր 6. Լոռուում էկոզբոսաշրջության զարգացման համար բացակայող ռեսուրսները
- Գծապատկեր 7. Լոռուում առողջարանային ներուժի հիմնական ռեսուրսները
- Գծապատկեր 8. Լոռուում ագրոտուրիզմի զարգացմանը միտված արարողությունների բազմազանությունը, խոչընդոտները և ընձեռնած հնարավորությունները
- Գծապատկեր 9. Լոռին խորհրդանշող հուշանվերների խթանմանը նպաստող գործոններ
- Գծապատկեր 10. Լոռու մարզում կարճաժամկետ տուրերի հնարավոր տեսակներ
- Գծապատկեր 11. ՀՀ զբոսաշրջության ոլորտում Լոռու մարզի մրցունակության բարձրացման նախապայմաններ
- Գծապատկեր 12. Զբոսաշրջային արդյունքի մրցունակության կախվածությունը համայնքի բնակչից
- Գծապատկեր 13. Լոռու մարզի զբոսաշրջության ոլորտում ներգրավված մարդկային ռեսուրսների զարգացմաննախապայմանները
- Գծապատկեր 14. Զբոսաշրջության ոլորտի ազդեցության հետևանքները Լոռու մարզի զարգացման վրա

## ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՑԱՆԿ

- Հավելված 1. Լոռու մարզում գործող թանգարանները
- Հավելված 2. Լոռու մարզի կամուրջները
- Հավելված 3. Լոռու մարզի աղբյուրները և հուշաղբյուրները
- Հավելված 4. Լոռու մարզի առավել դիտարժան պատմամշակութային հուշարձանները
- Հավելված 5. Լոռու մարզի ուխտավայրերը
- Հավելված 6. Լոռու մարզում գործող բանկերի մասնաճյուղերը
- Հավելված 7. Լոռու մարզի պետական արգելավայրերը
- Հավելված 8. Լոռու մարզի դենդրոպարկերը և բուսաբանական այգին
- Հավելված 9. Լոռու մարզի առավել ուշագրավ բնական հուշարձանները
- Հավելված 10. Լոռու մարզի զբոս. ոլորտի համար դիտարժան արդյունաբերական գործարանները